

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 10—12

ՀՈԿՏԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԿԴ. ՏԱՐԻ 1950

ԵՂԻՇԷ ՎԵՐԳՈՊԵՑ ԿՈՂՐՇՑԻ ԿԵԱՆՔՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹԻՒՆԸ

Մեր ուսումնասիրութեան մէջ, նուիրուած եղիշէի «Հայոց պատերազմի Պատմութեան», կանխած էինք տալ Եղիշէի Կեանքն այնպէս ինչպէս ներկայացուցած էր մեզի աւանդութիւնն եւ երեւակայած էին ԺԸ. — ԺԹ. դարու հեղինակներն եւ բանաստեղծները (§ 3—4): Եղիշէի գլխաւոր գործն էր Պատմութիւնը, որուն մէջ կը նշուէր ինքզինքը իբրեւ ակնատես պատմութեան անց-զինքը իբրեւ ակնատես պատմութեան անց-զինքը, գործնք գրի կ'առնէր: Այդ աշխատութեան մէջ կը ճառագրէր հեղինակը Վարդան Մամիկոնեանի կտիւնները, մղուած 450 451 տարիներուն: Բնականաբար պիտի ճշդուէր իր ժամանակն ալ այդ Պատմութեան տուեալներու հիման վրայ. Եղիշէ Ե. դարու երրորդ քառորդին կը մատենագրէր:

Պատմութեան ամբողջութեան մասին կասկած յայտնուած էր վաղ իսկ (§ 8): Կասկածի ենթարկուեցաւ ԺԹ. դարու բանասէրներէն պատմագրին զէպքերու ակնատես ըլլալն ալ: Ուրիշներ ցոյց տուին անոր ձեռքը ազրիւր Ղ. Փարպեցոյ Պատմութիւնը, գրուած Ձ. դարու սկիզբը (§ 5): Մեր ուսումնասիրութիւնը բերաւ զմեզ այն համոզման, թէ Պատմութիւնը այնպէս ինչպէս հասած է մեզի, սկզբնազիրը չի ներկայացներ. իսկ Սկզբնազիրը իրեն նիւթ ունէր 570—578 տարիներու անցքերը: Ուստի ներկայ բնագիրը խարդախուած է Կարձարդանի պատմութիւնը վերածուած է Կարձարդանի պատմութեան: Այս ըմբռնումով Եղիշէ ոչ թէ Ե. դարու երրորդ քառորդին, այլ Ձ. դարու չորրորդ քառորդին պէտք է ապրած եւ պատմագրած ըլլայ:

Բարերախտաբար Եղիշէ միակ գրութեան մը հեղինակը չէր: Հասած է մեզի իր գրչէն ճոխ թուով մատենագրութիւն, ինչպէս պատմական, նոյնպէս ճառական եւ մեկնո-

ղական, նաեւ իմաստասիրական բովանդակութեամբ, որ կը նպաստէ մեզի ոչ միայն ճշդելու իր ժամանակը, այլ եւ զձեռք իր կենսագրականը: Եթէ ժամանակակից մատենագիրները զլացած են մեզի հաղորդել անոր կեանքի մասին տեղեկութիւններ, բայց կը գտնենք ուշ ժամանակի հեղինակներու քով անոր մասին շահագրգիռ ակնարկութիւններ, նոյն իսկ օտար հեղինակի մը քով թանկագին վկայութիւն մը:

Ո. ԿԵՆՍՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԵՏՔԵՐ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՒՄՆԵՐ 1. ԵՂԻՇԷ ԿՈՂՐՇՑԻ

Թ. դարու հեղինակ մը Տաճատ քահանայ եւ վարդապետ իբր 890ին պատասխանելով Թովմաս քահանայ եւ վարդապետի հարցումներուն, անոր վերջին հարցումին, որ Ա. Յովհ. Ե. 8 համարին կը հայէր, այսպէս կ'անդրադառնայ. «Եւ որ Յովհաննէս աւետարանիչն յիշեալ է, թէ 'Հոգին եւ ջուրն եւ տարանիչն յիշեալ է, թէ 'Հոգին եւ ջուրն եւ արիւնն մի են երեքեան, ճամբարիտ են եւ մեք խոստովանիմք. բայց զերեքեանն՝ ի վերայ մկրտութեանն, զոր ուսուցանեն կենդանաբար ազրիւրք տիգախոց կողին, զոր Կիւրեղ Երուսաղեմի վկայէ¹, եւ Յոհան Բիւզանդացի² եւ Եղիշայ Կողբացի. որով եւ գտեղիս ոչ բացայայտեցաք. գիտութեան հարցողին թողցուք. թող ճանաչէ զվկայող»:

Էջմ. 2679 (Գէորգեան Բաթին Թ. 102). ասկէ՝ Վենետիկ, Միխիթ. Մատենադարան, Թ. 218, թղ. 297բ (1835. Սարգիսեան, Յուցակ, Բ., 288):

¹ Հմմտ. Կոչունի Ընծայութեան, էջ 38 եւ 253:
² Թէ Յովհ. Ոսկերեանի ո'ր գրութիւնը կ'ակնարկէ, չեմ կրնար մատնանշել: Ուշագրութեան արժանի է, որ Յովհ. կը կոչուի Բիւզանդացի, այսինքն Կ. Պոլսոյ եպիսկոպոս: Տակաւին անձանոթ էր անշուշտ Տաճատի անոր «Ոսկերեան» յորջորջումը: Առաջին անգամ Մ. Սորենացի (Գ. 57) է որ Ատտիկոսի բերանը կը դնէ. «Հայրն մեր սուրբ Յովհաննէս... Ոսկի բերան կոչեցին զմա»: Ե. դարուն անձանոթ էր յորջորջումս. առաջին անգամ Ոսկերեանի զործերու լատիներէն թարգմանութիւններու մէջ երեւան կու գայ, Ձ. դարուն:

Եղիշէ ունի շարք մը մեկնողական գրութիւններու. հոս կ'ականարկուի հաւանօրէն Վարդապետութիւնը, ուր երկիցս խօսք եղած է տիգրանոս կողմէ մասին (էջ 289, 291): Պատճառ չկայ կասկածելու թէ այս Կողբացին նոյն շրջանի Եղիշէ քահանայի եւ վարդապետի հետ: Տաճատ քահանայ այդ մեկնողական գրութեան խորագրին մէջ կարգացած ըլլալու էր «Եղիշա Կողբացի»: Թէ հեղինակը ինչպէս կը ստորագրէր իր անունը, չգիտենք, գիտենք միայն թէ Եղիշէ անունը Այրապետութեան ճառին մէջ գրուած է «Եղիշա» (էջ 233). այսպէս նաեւ Պատմութեան Բ. Խումբի ձեռագիրներու մէջ հեղինակը կոչուած է Եղիշա փոխ. Եղիշէի (§ 13). Թ. Արծրունի ունի երկու ձեւերն ալ (էջ 81):

2. ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ

Թովմաս Արծրունի (Ճ. դարու առաջին քառորդին), կը յիշէ «Պատմութիւնք սրբոց Վարդանանց, զորս գրեաց երանելի քահանայն Եղիշէ» (27): Այսպէս «Սրբասիրի տեսան Եղիշէի քահանայի եւ ճգնաւորի եւ միայնակեցի» կը խորագրուի Այրապետութեան ճառը (Պարիս, Bibl. nat. cod. arm. 117, 74r (1307). այլուր կ'ըսուի՝ «Եղիշէի երեցու», նաեւ «վարդապետի»: Աւելի սովորական է կոչել «Վարդապետ». թերեւս լաւագոյն Թ. դարու սովորութեան համաձայն «քահանայ եւ վարդապետ», ինչպէս կը յորջորջուէին Տաճատ եւ Թովմաս (տե՛ս վերը):

3. ԵՂԻՇԷ ԺԳՆԱԽՈՐ ԵՒ ՄԻԱՅՆԱԿԱՆՑ

Թովմաս Արծրունի գիտէ, թէ Եղիշէ գտնուած է Մոկաց աշխարհը. «Եւ սրբոց վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին, եկեալ առ նա Բարծուճայ...» (81): «Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմ իկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին», ուր եւ կը վախճանի (անդ, հմմտ. § 3): Այսպէս գիտէ նաեւ Գաւթի կրօնաւոր 1172ին, որուն համաձայն Եղիշէ Վարդանանց պատերազմէն ետքը «վարս կրօնաւորութեան յանձն առնոյր եւ զխառամբերութիւն ճգնութեան... եւ յանապատի ուրեմն վախճանեալ» (§ 3): Այս մտածմունքը կարելի է թելադրած ըլլալ Միանձանց ճառը, որ կ'ենթադրէ զԵղիշէ միանձանքներէ շրջապատուած:

Իրեն պիտի պատահինք յետոյ Միանձանք լիբան վրայ, ճգնութեան անձնատուր: Բայց ան առաւելագոյն սիրած է հայրենի վանքերը ինչպէս կարելի է հետեւցնել իր խօսքերէն. «Եւ արդ ես տեսանեմ ի մերում աշխարհիս եւ ոչ գոք ազատեալ յայսպիսի աղետից... ի պատճառս ուխտաւորութեան հեռացաք ի սուրբ ծնողաց եւ արարաք բազում հարս օտարոտիս...» (Ճառ Միանձանց, 162). «Տեսանեմք իսկ աստէն եւ ի մերում աշխարհիս՝ բազումք վարեցեալք առաքինութեամբ անսխալ հաւատովք ըստ առաքելական կանոնին... զայս հաւատ յանձին պահելով դեզերէն յուսումնասիրութեան ուխտաւոր մանկունք Հայոց մեծաց... գործ հանապազորդ այնպիսեացն... զանձինս պահել յամենայն ողջսպան վիստոց» (Ճառ Այրապետութիւնն, 232): Որչափ ալ անժխտելի է Եղիշէ քահանայի միտութիւնը դէպի միանձանական եւ նկատողական կեանք, բայց եւ այնպէս դժուար է հաւատալ թէ Կողբացի բեմբառացը մեկուսացած ըլլայ Մոկաց եւ Ռշտունեաց լեռները, ինչպէս Թ. Արծրունի կը հաւատէ եւ տեղական աւանդութիւնը հաւատացած է:

4. ԱՎԱՆԱՏԵՍ 570—578 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՅՑՔԵՐՈՒՆ

Պատմութեան մէջ կը գրէ Եղիշէ. «Արտօնարալից ողբովք ճառագրեմք զբազում հարուածս, յորում պատահեցաք եւ մեք իսկ ակնատեսք լինելով» (6). «ոչ ի կարծ ընդոտուցեալ եւ ոչ ի լուր վարթուցեալ, այլ եւ ինքնին անձամբ անդէն ի տեղուջն պատահեցի եւ տեսի եւ լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով» (14): Այս եւ նման տեղիքներէն կը տեսնուի, թէ հեղինակը ժամանակակից է դէպքերուն, որոնք գործուած են իր աչքերուն տալ:

573ին գարնան, Խաղամարտեաց դաշտի վրայ մղուած ճակատամարտէն ետքը կրցողը փախաւ. ոմանք ապաստանեցան ամուր բերդեր երկրին եւ սահմանակից աշխարհներու մէջ. ուրիշներ, յատկապէս ապստամբութեան պարագլուխները, ապաստան փրկուեցին Հոռոմէական հողի վրայ: Անոնցմէ մաս մը հասաւ Կ. Պոլիս. անոնց թուին մէջ Կաթողիկոսն Յովհաննէս, շատ եպիսկոպոսներ եւ քահանաներ. նոյնպէս զինուորականներէն Վարդան եւ ուրիշներ: Թէպէտ այս փախստականներու թուին մէջ յանուանէ չի

յիշուիր Եղիշէ, բայց Թովմաս Արծրունի կը վկայէ թէ Եղիշէ իր Պատմութիւնը գրած է «հրամանաւ Վարդանայ»: Որովհետեւ Պատմութեան գլխաւոր նիւթն են 570—578 տարիներու դէպքերը, պէտք է ընդունել, թէ Եղիշէ Վարդանի հրամանը ստացած է 578ին ետքը: Այս տարւոյն Վարդան Մամիկոնեան, Քաջն, կը գտնուէր Կ. Պոլիս: Ուստի հոն էր նաեւ Եղիշէ:

Այսպէս տրամաբանած էի Ուսումնասիրութեան մէջ. առանց նկատողութեան առնելու ներքին եւ արտաքին այն ապացոյցները, զորոնք մատնանշած էի ուսումնասիրութեան ընթացքին, եւ որոնք Պատմութեան գրութեան ժամանակը աւելի ուշ կ'ենթադրէին. ինչպէս օրինակի համար Փիլոնի եւ Անանիա Շիրակացոյ զրուցութիւնները, որոնցմէ օգտուած էր Եղիշէ: Ասոնք Պատմութեան գրութեան ժամանակը առ կանուի 630 ցոյց կու տային:

Եթէ Եղիշէ 570ին թագաւորին կարաւանին մէջ էր, կամ իրրեւ հայ հեծելազորին անդամ եւ կամ այդ հեծելազորին ընկերացող եկեղեցականներէն մէկը, պէտք էր գտնէ 20 տարեկան նկատի առնուէր, այս պարագային 630ին պիտի ըլլար ան իր 80երորդ հասակին: Պիտի տեսնենք յետոյ, թէ ան 640 եւ 645ին տակաւին կենդանի էր, ուստի արդէն 90—95 տարեկան:

Պարագաներ, որոնք կը ստիպեն կասկածի ենթարկել Եղիշէի ժամանակցութիւնը 570—578 տարիներու դէպքերուն եւ անոր խօսքերը «ակնատես» եղած ըլլալու մասին լոկ հոնտորական արտայայտութիւններ նկատել: Ան նման տեղիք մ'ալ ունի Ը. Յեղանակին մէջ, ուր թէեւ իր աղբիւրն է Գ. Փարպեցի, բայց եւ այնպէս կը գրէ թէ Ս. Քահանայից նահատակութեան մասին «մեզ տեղեկութիւններ հաղորդողը Խուսիկն է (էջ 142):

5. ԵՂԻՇԷ ՊԱՆՏՈՍԻՆԻ ՄԵՋ

Եղիշէ շրջած է Պաղեստինի սրբավայրերը, թող իւր ըլլով չափած է երկիրը: Ան գիտէ, թէ Ղազարի գիւղը (Բեթանիա) «մերձ է յերուսաղէմ մղոնիւք երիւք», իսկ «ի Բեթանիայ մինչեւ ի Բեթարբա Հի մղոնք են» (Ճառ ի Յարութիւնն Ղազարու, Մամբրէ, էջ 16, 23): Եղած է նաեւ Գագա քաղաքը. «որոյ տեսեալ է զքաղաքն եւ զգրուես քաղաքին, նա զարմանայ անաւել քան զյոյժ» (Մեկնութիւն Դատաւորաց, էջ 190): Վարդան Արեւելցի յառաջ կը բերէ Եղիշէի Արարածոց Մեկնութեան տեղիքս. «Գեան Յորդանան ի վերոյ կայ Բասանու եւ յորովք աղբիւրք բոլորն օգնութիւն տալով ընդարձակ դաշտին ի ծովէն Տիրերեայ մինչեւ ի ծովն Աղի Սողոմայ, զամառն եւ զմեռնն, լի կալով ի բերոց. զոր իրրեւ զգրախոն Աստուծոյ վկայէ» (Վիեննա, Թ. 229, թղ. 47r): Բարձրացած է Թարոր լեռան վրայ: Իր Այրապետութեան ճառին մէջ կը գրէ Եղիշէ. «Ղաւսեւ իւր անոնք անաւել իսկ հասնալ եւ աչօք տեսալ, ոչ յատուկ միայն անանձինն, այլ բազում ընկերակցօք. որոց եւ կամ իսկ եղև ոմանց մնալ ի լեռինն, ոչ ըստ մարմնոյ ախորժութեամբ բաղձանաց, այլ ազուր սիրոյն Քրիստոսի: Քանզի բնակեալ են անդ բազմութիւն սքանչելի եղբարց, որք հողով յաճախագոյն վարին քան թէ մարմնով» (236): «Եւ ի տեղուջն ուր երեւեցանոցա Տէր լուսաւոր պայծառութեամբն, յարեւելից կողմանէ հովտացն, յետ բանիցն Պետրոսի՝ հեռագոյն ի միմեանց շինեալ երիս եկեղեցիս. եւ ունին պաշտօնեայս բազումս, զատեալք եւ որոշեալք յամենայն մարմնաւոր ցանկութեանց» (237): «Ձիք նոցա իւր յամանս վասն կերակրոց. բայց եթէ ի ծախս անչէլ կանթեղաց, որ հանապազորդ վառեալ այրին յերիս եկեղեցիսն» (237): «Եւ մի յերիս եկեղեցիս մեծագոյն է քան զերկուսն, զոր եւ Տէրունեանն իսկ անուանեն. եւ յերկուս անդ եղեալ են զնշխարս Առաքելոցն, որք եւ հիմնարկեցին իսկ զտեղին այն օր՝ ասելով զանուն երկոց տաղաւարացն. եւ անուանեն զնոսա վկայարանս սուրբս, եւ յիշատակեն զնոսա յանուն Մովսէսի եւ Եղիայի: Եւ զորոյր աղօթան ի Կիւրակէին (= ի Տէրունեանն) կատարեն. իսկ յերկուսն եւս երթան եւ անդ զԱստուած փառաւորեն» (238): «Եւ ես տատապեալս քան զամենայն մարդ, որ հետեւեցայ հետիոտս ընդ տէրունեան շաւիղն ի լեռն անդ եւ աչօք տեսի զժողով սքանչելի եղբարց, աղաչեմ զընթերցողսք եւ զլսողսք, աղօթս արարէք ի վերայ իմ եւ ձեր հասարակ...» (239):

Կը խոստովանի հոս Եղիշէ, թէ ինքը «բազում ընկերակցօք» հանդերձ այցելած է իրրեւ ուխտաւոր Թարոր կողմ, ուր, ըստ



աւանդութեան, տեղի ունեցած է Գրիստոսի այլակերպութիւնը. այսպէս գիտէ նաեւ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան. ճառ ժԲ, էջ 215. «Նոքին (Մովսէս եւ Եղիա) իսկ էին, որ ի ժամանակին յայլակերպսն լինելոյ եկին կացին ի լերինն թարոր»։ Այսպէս նաեւ Ս. Յերոնիմոս 386ին (Թուղթ ԺԷ. առ Պաւղոս)։ Բայց չեն յիշեր, թէ հոն եկեղեցիներ գոյութիւն ունէին։ Այս մասին լռած են նաեւ Ե. դարու մատենագիրները։ Առաջին անգամ Անտոնինոս Պղակեստինոս ճանապարհորդն է, որ իր 570ին կը գրէ, թէ «Նազարէթէն եկանք թարոր լեռը, որ կը ցցուի դաշերու մէջէն։ Արգաւանդ երկիր, որ իր 6 մղոն տարածութիւն ունի եւ իր 3 մղոն բարձրութիւն։ Գազաթին մէկ մղոն հարթավայր կայ։ Անոր վրայ կը գտնուի երեք եկեղեցի, հոն ուր աշակերտը ըսաւ. Շինեսցուք աստ երիս տաղաւարս։ Շրջապատին կան այլեւայլ քաղաքներ, որոնք կը յիշուին թագաւորաց գրքին մէջ¹»։ Իր 670ին Արկուլֆ գտաւ հոն ընդարձակ մենաստան մը բազմաթիւ խցիկներով եւ երեք եկեղեցի, պատուած որմափակով։ Իսկ 754ին Վիլլիբրալդ կը յիշէ տեսած ըլլալ վանք մը եւ եկեղեցի մը նուիրուած Տեառն մերոյ եւ Մովսէսի եւ Եղիայի²։ Եկեղեցիները շինուած ըլլալու են յընթացս Զ. դարու։

6. ԵԳԻՇԷ ՍԻՆԱՅԻ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

Է. դարու կէսին Անաստաս անուն երկու կրօնաւորներ գրած են Սինայի լեռան վրայ ճգնող սուրբ հայրերու կեանքէն ոգեշահ պատմութիւններ։ Երկուքն ալ իրարմէ անկախ։ Այս ուրոյն գրութիւնները յետադային անձանօթ մը միացուցած է։ F. Nau³ կը համարի թէ այս պատմութեան առաջին 41 գլուխները Անաստաս կրօնաւորի մ'ըլլան, իսկ 42—69 հատուածները ըստ մեծի մասին

¹ Antonini Placentini Itinerarium im unentstellten Text mit deutscher Übersetzung, herausgegeben von J. Gildemeister. Berlin 1889, էջ 4—5.
² P. S. Vailhé, Répertoire alphabétique des monastères de Palestine: Revue de l'orient chrétien 5 (1900), p. 285.
³ Les récits inédits du moine Anastase. թարգմ. F. Nau, Paris 1902 (արտատպուած է թերթէն Revue de l'Institut Catholique de Paris 1902). Le texte grec des récits du moine Anastase sur les saints Pères du Sinai. Publié par F. Nau: Oriens Christianus 2 (1902), 58—89; 3 (1903), 56—90. Հմմտ. նաեւ F. Nau, Note sur la date de la mort de S. Jean Climaque, Byzantinische Zeitschrift 11 (1902), 35—37.

կը պատկանին Անաստաս Սինայեցոյ։ Գրութեան ժամանակը, յեցած ներքին ապացոյցներու վրայ, կը նշանակէ 650էն ոչ շատ վերջը։

Ա. մասի ԼԸ. գլխուն մէջ կ'ըսուի, թէ «Հայերը, ինչպէս ամէն մարդ գիտէ, սովորութիւնն ունին մեծ բազմութեամբ (ուխտադնացութեան) դալ սուրբ Սինայի լեռը։ Ասկէ 20 տարի յառաջ եկաւ անոնցմէ մեծ բազմութիւն մը իր 800 հոգի։ Արդ երբ անոնք սուրբ լեռան վրայ կեցած կը նայէին հեռուները տեսնելու այն սուրբ վէժը, ուր Մովսէս պատուիրանները ընդունած էր, ահա նոյն տեղոյն վրայ եւ նոյն ժողովուրդին վրայ Աստուծոյ տեսիլք եւ ահաւոր սքանչելիք կը կատարուի, այնպէս ինչպէս երբեմն այն հին ժամանակները, երբ օրէնքի տուչութիւնը կ'ըլլար, վասն զի բովանդակ սուրբ լեռը եւ այն ժողովուրդը կրակի մէջ կ'երկար» եւ այլն։

Այս պատմութեան նման կը հնչէ նաեւ հետեւեալը, զոր թորգոմ Արքեպ. Գուշակեան յառաջ բերած է Սերաստիոյ Ս. Նշան վանքի թ. 215 ձեռագրէն, որ վերնագիր կը կրէ. «Վկայութիւնք եւ օրինակք եւ հաստատութիւնք սրբոց պատկերաց, զի պատուելի են»։ Հատուածն է. «Եւ յորժամ Հայոց ճգնաւորքն եկին ի Սինէական լեռնէն ի վայր, նա ըյս ետես մարդ մի կայր ի ճգնաւորաց (°) միջին, զոր Հոռոմք տեսին եւ հիացան. եւ բերին զՄովսէսի պատկերն, նա նման էր նմա. եւ անյայտ եղև» (Ձեռ., էջ 555/56)։

Թէ իրօք այս սովորութիւնն ունէին Հայերը, ուխտաւորներու մեծ բազմութեամբ այցելել տնօրինական սրբավայրերը, կը վկայէ բացի Եղիշէն նաեւ Ս. Եւթիմիոսի վարքագիրը, որ կը պատմէ, թէ իր 400 ուխտաւոր Հայեր եկած եւ ուխտի Երուսաղէմի մերձակայ Սահէլ գիւղի Ս. Եւթիմիոսի վանքը (հմմտ. Սիոն, 1928, էջ 367) արդէն Ե. դարուն։

Անաստաս կրօնաւոր ԼԷ. գլխուն մէջ յառաջ կը բերէ նաեւ հետեւեալ պատմութեամբ. «Այս եղբայրներէն ուրիշ մը, Եղիշէ («Նիւսէոս») անուն, ազգով հայ, հինգ տարի յառաջ սպասաւոր եղած էր Սուրբ Լեռան վրայ։ Ասիկա ոչ թէ մէկ կամ երկու, այլ շատ անգամ, գրեթէ ամէն գիշեր, կը տեսնեմ, կ'ըսէր, այն հոռը, որ կը տարածուէր աս-

տուածային օրէնստուչութեան սուրբ տաճարին վրայ։ Ան սուրբ եւ արժանաւոր մարդ մըն էր»։

Նոյն Անաստաս ԼԱ. գլխուն մէջ, Սինայի լեռան շրջակայքի, Գուզգա անուն վայրի վրայ կը յիշէ Կոզմաս անուամբ արքայ մըն ալ, որ հայ էր եւ բնակակից Անաստասի։ Իսկ ԽԵ. գլխուն մէջ կը յիշուի ուրիշ հայ մըն ալ, Գրիգոր անուն, որ հայերէն կը խօսէր. իր մօտ էր Անաստաս (Սինայեցի)։

Այս դարէն ծանօթ է մեզի Անաստաս վարդապետ մ'ալ, ազգով հայ, որ երկար ժամանակ դեղերած է Պաղեստին, շրջած է Սինայի լեռը եւ այլ վայրեր։ Սա Համազասպ Կամսարականի⁴ խնդրանքով գրած է Երուսաղէմի եւ շրջակայքի հայ վանքերու ցուցակը իր 650ին։ Այս տեղ կը յիշէ թէ նաեւ Երուսաղէմէն դուրս «բազումք յեզրպոսու եւ յԱղեքսանդրիա եւ ի Թերսյիլք եւ ի լեռն Սինէական կային մենաստանք Հայոց. նաեւ Սուրբ Լեռն թարոր եւ յեր Ծովուն Տիւրերիայ եւ յայլ սահման Պաղեստինոյ. զոր յորովս իմովին իսկ աչօք տեսալ՝ զամս բայտովս իմովին իսկ աչօք տեսալ յայմիկ։ զուս [կայի] լինելով յաշխարհին յայմիկ։ զուս [կայի] լինելով յաշխարհին յայմիկ։ Եւ ամենայն աստուածաշունչ եւ հոգեպատմ պատուիրանք անպակաս գոյր ի հայկական լեզուս յամենայն մենաստանս Երուսաղէմի եւ որ գնովաւ շուրջ [Գրուսաղէմաւ]» (Հայապատում, Բ., էջ 228)։

Անաստասի հաղորդած այս տեղեկութեանց կից կ'ըսուի (ուրիշ գրիչէ մը) թէ Յովհաննէս Գարեղինեցի կաթողիկոսի (557—574) օրով 500 հայ կրօնաւորներ կային Երուսաղէմ, որոնք ապա ըստ մասնէ փոխադրուեցան «ի Սինէական լեռն (սուրբ Սինէական կրօնաւորք) . . . ի Թարորական լեռն եւ ի Հերմոն հանդէպ թարորայ» (անդ, էջ 229)։

Այս Անաստաս վարդապետ հաւանօրէն մին է վերոյիշեալ երկու Անաստասներէ։ Ուրիշ պատեհագոյն տեղ մը կը յուսամ անգրագանալ այս կէտին։

Դժուար է ճշդել վերոյիշեալ Եղիշէ, Կոզմաս եւ Գրիգոր անուններու ինքնութիւնը։ Բայց ի մասին Եղիշէի եթէ նկատի առնենք

⁴ Համազասպ Կամսարական ծանօթ է Պատմութեան. այս շրջանին անունին էր սակայն Համազասպ Մամիկոնեան Կուրապաղատ. թերեւս այս Կուրապաղատ անհմուտ գրէ մը ազաւարտած ըլլայ Կամսարական։

որ նոյնանուն քահանայ մը ուրիշ հայրենակիցներու հետ բարձրացած է թարոր լեռը, մտած է տեղոյն կրօնաւորներու հետ յարաբերութեան մէջ, եղած է հիացող մը անոնց վարած սրբակեաց վարքի, միւս կողմէ ունինք նաեւ Համանուն մատենագիր մը, որ հեղինակն է Միանձանց ճառին, ծանօթ «ի կողմանս հարաւոյ» ծաղկած վանական եւ ճգնաւորական հաստատութիւններու, բնականաբար պիտի միտինք պատահականութեան չվերագրել անուանց նոյնութիւնը, այլ անոնց միութիւնը տեսնել մէկ անձնաւորութեան վրայ. ինչպէս Եղիշէի անունով աւանդուած զանազան գրութիւնները ըստ լեզուին, ոճին եւ գաղափարներուն համանուն մէկ հեղինակի ստեղծագործութիւնը կը ներկայանան։

Նկատմամբ ժամանակի եթէ երակէս ընտրենք 650 թուականը, զոր կը համարի F. Nau Ոգեշահ պատմութեանց գրութեան կանխագոյն տարին, ԼԸ. եւ ԼԷ. գլուխներու մէջ մատնանշուած «20 եւ 5 տարի յառաջ» ժամանակագրական ցուցմունքները հարկ պիտի ըլլայ իմանալ 630⁵ եւ 645 տարիները. ուստի Եղիշէ Սինայի լեռան վրայ կը գրուի նուէր 645 տարւոյն։ Բայց թէ այդ թուականին իր կեանքի ո՞ր հասակին մէջ կը ճգնէր, կը մնայ մեզի անձանօթ։

7. ԳԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՐԱՇԱՐԹ

Եղիշէ իր յաղագս Միանձանց ճառին մէջ ակնարկութիւն մ'ունի գերութեան, հարստահարութեան եւ բնութեան արհաւիրքներու մասին, որոնք տեղի ունեցած են մօտաւոր անցեալի մէջ, եւ որոնց ճշուամի տակ է ժողովուրդը տակաւին ճառին գրութեան ժամանակ։ Յառաջ կը բերեմ տեղիքս. «Վասն այսորիկ եւ ամենայն չարիք եկին հասին յաւուրս մեր. կենդանեաւ մերով տեսաք զլիակունս անձանց մերոց։ Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի. եւ սուրբ քահանայք մեր խողիտողեցան ի ձեռաց անօրինաց. զեղեցիկ երիտասարդքն զենան ի սպանումն. եւ բազում կուսանք վարեցան ի գերութիւն. զիրգ կանայք անկան ի տառա-

⁵ Նկատի առնելու է, որ Հերակղ Կայսր 629 ապրիլ 9ին մեծ շուքով Երուսաղէմ վերադարձուց Ս. Խաչը, որ 604ին Պարսիկներէն գերի տարուած էր Տիգրանէ։ Հաւանօրէն այս առիթով տեղի ունեցած էր 800 Հայերու ուխտադնացութիւնը Երուսաղէմ եւ Սինայի։

չելի եղած ըլլալ Եղիշէի 650էն յառաջ եւ ետքը:

Այն պարագան, որ Եղիշէ կարգացած է Անանիա Ծիրակացոյ գրութիւնները, ուստի ժամանակակից մեղած է անոր, կը թելադրէ մեզի հարցնելու, թէ արդեօք Եղիշէ չէ՞ աշակերտած Անանիայի: Ինքը Անանիա կը պատմէ, թէ իր Տրապիզոնէն հայրենիք վերադառնալէ ետքը շատեր եկած եւ աշակերտած են իրեն. բայց քիչ յետոյ հեռացած են իրմէ, բաւական համարելով ձեռք բերած ուսումը. Անանիա կը գրէ.

«Իբրեւ եկի ես, բազումք ընթացան առ իս յուսումն. եւ սուղ ինչ խելամտեալ՝ թողին զիս եւ զնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս զորչափ ինչ (Ձ. զորչափիկն) առին: Եւ փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել զոր ոչն զիտէին, եւ քարոզել զանձինս վարդապետս, որում ոչն էին հասու (լեալ) . . . այլ եւ ի վերայ իմ պարսաւանս ասէին տգիտութեան, որք յինքենէ էին յերիւեալք». Ա. Գ. Արրահամեան, Անանիա Ծիրակացու Մատենագրութիւնը, Ուսումնասիրութիւն (եւ բնագիրք), Երեւան 1944, էջ 209:

Այս աշակերտներու մասին են Մամուլէլ Անեցոյ տողերս. «Աշակերտքն Անանիայի՝ Հերմոն եւ Տրգատ եւ Ազարիա, Եղեկիէլ եւ Կիրակոս՝ երթեալ յերուսաղէմ հաւանեցան երկարնակացն. եւ ի դարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա: Իսկ նոքա ուր հասանէին՝ զնա ասէին պատճառ հայհոյութեան. զոր մի ոք իշխեսցէ ասել կամ հաւատալ» (էջ 85): Այս հինգ աշակերտներու մէջ չենք գտներ Եղիշէի անունը. բայց գիտենք որ Եղիշէ բարձրացած է Թարոր լեռը «ոչ յատուկ միայն առանձինն, այլ բազում ընկերակցօք. որոց եւ կամ իսկ եղեւ ոմանց մնալ ի լերինն» (236): Այդ «ոմանք» ըլլալու են անոնք, որոնք «հաւանեցան երկարնակացն»: Անանիա վերադարձած էր Տրապիզոնէն 628/9ին: Այս տարւոյն աշակերտած ըլլալու են իրեն յիշեալ «բազումք», եւ իրմէ հեռացած իբր 632ին, ուստի անոնց Երուսաղէմ ուխտի երթալն ալ մօտաւորապէս 632/3ին զնելու է: Եղիշէ իր գրութեան մէջ ցոյց կու տայ երկրախօսական, օգերեւութարանական, հոգեխօսական եւ այլ իմաստասիրական մակացութիւն-

ներու հմուտ, զորոնք ուսած ըլլալու է առոտս Անանիա կամ անոր գրութիւններու ընթերցանութեամբ:

11. ՄԵԿԵՆԱՍՆ ԳԱԻԻԹ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Թոմաս Արծրունի կը պատմէր թէ Բարձումայ ասորի խնդրած է Եղիշէին տեսնել «զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ» (81): Որովհետեւ Կարմիր Վարդան 26 մայիս 451 նահատակուած էր Աւարայրի դաշտին վրայ, անհաւանական համարած էի խօսքս Կարմիր Վարդանի մասին իմանալ. բայց հաւանական դտած էի յանձին Վարդանի Քաջն Վարդան տեսնել, որ 571—573 տարիներուն հայ բանակին սպարապետն էր եւ ապա քաշուած Կ.Պոլիս (§ 14): Բայց այժմ, երբ ճշդուեցաւ Եղիշէի ժամանակը, այսինքն ան ապրած է է. դարու երկրորդ եւ երրորդ քառորդին մօտաւորապէս, ուստի 633—660, հարկ է հրաժարիլ այս տեսութենէն եւ ուշադրութիւնը ուղղել ձեռագիրներու ընթերցումին. Արմաշի եւ Պաշիկ վարդապետի ձեռագիրները վերնագիր կը կրէին. «Եղիշէի վարդապետի, զար արարեալ է ի խնդրոյ Դաւթի Մամիկոնի, վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի». իսկ Վիեննայի 971 եւ այլ 6 ձեռագիրներ ունէին՝ Պատմութիւն . . . յեղիշայէ սրբոյ՝ Դաւթայ երիցու հայցեալ» (§ 13): Առաջին խումբը Մեկենաս կը ճանչնայ Դաւիթ Մամիկոն(եան)ը, իսկ երկրորդը՝ Դաւիթ Երէցը: Այս շրջանէն ծանօթ է ինձ Դաւիթ Տարօնցի, որ յոյն բնագրէ թարգմանած է Բարսեղ Կեսարացոյ ճառն ի Ծնունդն Փրկչին, հրամանաւ Համազասպ Մամիկոնեանի ի Դամասկոս, ինչպէս կը ծանուցանէ յիշատակագրութիւն մը նոյն ճառին վերջը, որ է հետեւեալը. «Դաւիթ թարգման Տարօնցի զձառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ ի Դամասկացոյ քաղաքին՝ հրամանաւ Համազասպայ Կուրապաղատի, Մամիկոնէից տեսան. եւ եղիցի օրհնութիւն Տեառն ի վերայ նորա». էջմիածին, 1500 (ԺԳ.), ասկէ՝ Վիեննա, 217, 57բ—60բ (Տաշեան, Յուցակ, 550): Վիեննայի, 314, թղ. 145ա (ԺԱ.Վ.Ֆ. Յուց., Բ., 1262):

Համազասպ որդին էր Դաւիթ Մամիկոնեանի եւ եղբայրն Գրիգորի: Փեսայացած էր Ռշտունեաց տիրոջ Թէոդորոսի, որ հայ բանակին սպարապետն էր: Երբ Թէոդորոս

12. ՄԱԸԸ

ապստամբեցաւ Կայսեր՝ իշխանութենէն եւ ենթարկուեցաւ Արարացիներուն (652), իրեն համամիտ գտնուեցաւ Համազասպ: 653/4ին Ռշտունեաց տէրը հանդերձ ընտանիքով տարուեցաւ Դամասկոս. ամիրապետը անոր իշխանութիւնը յանձնեց Համազասպի: Իբր 658/9ին Հայաստան միւսանգամ առաւ Կայսեր լուծը: Համազասպ մնաց իր իշխանութեան մէջ, նոյն իսկ արժանացաւ Կայսեր կողմէ Կիւրապաղատ տիրոջ: Իր եղբայրն Գրիգոր տակաւին կը գտնուէր Դամասկոս, ուր պատանդ տարուած էր: 662/3ին Հայաստան դարձեալ ենթարկուեցաւ Արարներու: Այս տարւոյն վախճանած ըլլալու է Համազասպ, վասն զի Մուսուրի իշխանապետ Հայաստանի իշխող կը կարգէ Համազասպի եղբայրը, Գրիգոր Մամիկոնեան († 685):

Սերիոս այսպէս կը ներկայացնէ Համազասպ Մամիկոնեանը. «Այս առաքինի յամենայն դէմս. բայց ընդանեսուն եւ ընթերցասէր եւ ուսումնասէր. եւ ոչ ըստ հայրենի ազգին՝ վարժ եւ կիրթ հրահանգօք զինուորական վարժից» եւն (Սեր. 150—152. Յովհ. Դրասխ. 88—89):

Դաւիթ կը կոչուի Սերիոսի քով նաեւ Մուշեղ Մամիկոնեանի (640) հայրը (Սեր. 107). Մուշեղ, Համազասպ եւ Գրիգոր եղբայրնե՞ր էին:

Դաւիթ Տարօնցի նոյնպէս Մամիկոնեան էր եւ ի՞նչ պարագաներու տակ Դամասկոս գտնուած: Իբրեւ յունարէնագէտ եւ թարգմանիչ Բարսղի ճառին ան մարդուած ըլլալու էր իմաստասիրութեան մէջ: Իր ատիճանը չէ յիշուած յիշատակարանիս մէջ. նաեւ Եղիշէի Ա. խումբի ձեռագիրներու մէջ. Բ. խումբի ձեռագիրներն են, որ զինքը երէց կանուանեն: Դաւիթ թարգման, որ Տարօնցի էր, հաւանօրէն Մամիկոնեան էր. եւ կրնանք զինքը նկատել Եղիշէի Մեկենասը, որուն կը բացատրանէր Ընծայականին մէջ. «Այլ դու, ո՛վ մեծդ ի զիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեօք հրամայեսցես, քան թէ հրամայեցիս լաւազունաց» (5): Այլապէ հարկ կ'ըլլայ նկատել անել Համազասպի հայրը Դաւիթ Մամիկոնեան, որ Մամիկոնեաններու տէրն էր, թերեւս երիտասարդութեան մասնակցած 570—573 տարիներու պատերազմներու:

Եղիշէ 645ին կը գտնուէր Սինայի լեռան վրայ իբրեւ «սպասուոր»: Իջա՞ւ ան այդ լեռնէն եւ ե՞րբ: Գիտենք միայն, թէ իր գրութիւնները յորինած է ան «ի մերում աշխարհիս», ճառախօսած է հայ կրօնաւորներու եւ հայ ժողովուրդի շրջանին մէջ (հմմտ. էջ 159, 242): Իր գործունէութեան շրջանէն ոչ քաղաք եւ ոչ մենաստան յանուանէ յիշատակուած է: Նկատի առնելով որ Եղիշէ ծննդեամբ Կողբացի է, կրնանք թերեւս խորհիլ, թէ Հոփսիմեանց եւ Գայիանեանց մենաստաններէն մին կամ միւսը եղած ըլլայ իր ճգնարանը. անոնք վերաշինուած էին Կոմիտաս եւ Եզր կաթողիկոսներէն նոյն է. դարու առաջին կէսին: Եւ Եղիշէի ծաղկումի եւ պողարերութեան շրջանները ճշդիւ Եզր եւ Ներսէս Գ. կաթողիկոսներու տարիներուն կ'իյնան: Ան ժամանակակից մէջը Սերիոս Բագրատունեաց եպիսկոպոսին եւ պատմագրին. բայց ինչպէս ինքը, նոյնպէս Անանիա Ծիրակացի չեն արժանացած անոր պատմագիրքին մէջ յիշատակուելու:

Եղիշէի մահը պէտք է ենթադրել Անաստաս կաթողիկոսի օրով, ուստի 660—670 տարիներուն: Նաեւ յետագայ պատմագիրներուն անձանօթ մնացած է անոր մահուան տարին:

Ժ. դարու առաջին քառորդին լսած է Թոմաս Արծրունի, թէ Եղիշէ իր կեանքի վերջին տարիները անցուցած է Մոկաց լեռներու վրայ եւ վախճանած է Ռշտունեաց ծովեղբերքին: Ուշ ժամանակի աւանդութիւնը գիտէ անոր գերեզմանոցը Վառնիշատ գիւղին մէջ, ուր կանգնուած էր եկեղեցի մ'ալ յանուն Ս. Եղիշէի. 1426ին կ'իվտաչայ Աւետարան մը «եղի, կ'ըսէ, ի դրան Ս. Եղիշէ վարդապետին ի գեաւղն որ Վառնիշատ կոչի» (Նոտարք, 81): Բայց 1172ին Դաւիթ գրիչ գիտէ լոկ թէ, Եղիշէ «որպէս յալեաց ծովու ի նաւահանգիստ փութացեալ յանապատ . . . խոտարուա կենօք անցուցանելով զառօրեայ կենցաղս . . . եւ յանապատի ուրեմն յայրի վախճանեալ» (§ 3)¹:

13. ՆԿԱՐԱՎԱԿԱՆՆԵՐ

Կողբ, ծանօթ իր աղահանքով, տուած էր հայ դասական դրականութեան համեմիչ

¹ Հմմտ. Ե. Լաւրյան, Վասպուրականի նշանաւոր վանքեր . . . Չարահան Ս. Նշան. Ազգագրական Հանդէս, 21 (1911), 43—47:

մը յանձին Եզնիկի, որ իրրեւ իմաստասէր, խօսնակ եւ քաղցրախօս զրիչ՝ ջատագով հանդիսացած էր քրիստոնէական աշխարհահայացքներու ընդդէմ բազմաստուածեան, երկարատեան եւ գնոստիկեան վարդապետութիւններու: Նոյն դիւղաքաղաքէն, նոյն հանգամանքներով հրապարակ իջած է նաեւ Եղիշէ, այս անգամ միանձնաւորի սքեմին տակ իրրեւ քարոզիչ քրիստոնէական բարոյականութեան, մեկնարան եւ փաստարան, պանծացներու Եկեղեցին իր նահատակներու մէջ, իր վանական հաստատութիւններու մէջ, իր բարոյախօսութեան մէջ:

Հայ Դպրոցի աշակերտ էր Եղիշէ, հաւանորէն Անանիա Երրակացոյ համարարանէն: Ան ունէր իր արամադրութեան տակ հայ հին եւ նոր ինքնուրոյն եւ թարգմանածոյ գրականութիւնը: Անտոնը ուսումնասիրութեամբ կը ծծէ անոնցմէ հիւթ եւ նիւթ. գործնք մարմնոյ եւ արիւնի կը վերածէ իր քանքարաշատ իմացականութեամբ: Կ'ուսումնասիրէ Աստուածաշունչը եւ անոր հայոց Մեկնողական գրութիւնները, Ոսկերեանի, Եփրեմի, Փիլոնի եւ ուրիշներու: Կը հրահանգուի ճարտասանական արուեստի մէջ, իրեն օրինակ ընտրած Ոսկերեանը իր ճառերուն մէջ:

Ան վանական է, նուիրուած նկատողական կեանքի, մերկ եւ կողոպուտ աշխարհէ եւ աշխարհայիններէ: Իր սրբական կեանքին վկայ են ժամանակիցները յանձին Անաստաս Սինայեցոյ: Ոչ միայն իր անձին, այլ եւ իր շրջակայքին սրբութեան հետամուտ է այդ միանձնականը: Քարոզիչ վանականներու եւ աշխարհիկներու: Կոչուած է Վարդապետան կ'ուսուցանէ եւ կը մեկնէ Աստուածաշունչը, կ'իմաստասիրէ, կը սահմանէ կանոններ: Մարտիրոսներու աշխարհին մէջ, Մարտիրոս Ժողովուրդին գաւաին էր, օտարազէն ժողովուրդներու հարստահարութեանց ենթակայ Եկեղեցոյ անդամ: Կը պարտաւորէր ժամանակը մխիթարութիւն ջամբել հաւատացեալներու, քաջաբերել զանոնք գիմակալիլու հալածանքներու, յոյս ներշնչելու անոնց լուսաւոյն օրերու եւ մասնաւորապէս անդէնական վարձատրութեան. փաստարկել Եկեղեցոյ աշխարհահայեացքը գրադաշտական քէշին դէմ, նախնեաց գիմազրական ոգին գարթուցանել նոր սերունդին մէջ:

Այս նպատակները հետապնդած է Եղիշէ իր հարուստ մատենագրութեան մէջ, որոնցմէ մաս մը միայն հասցուցած է մեզի ժամանակը: Բազմազան նիւթերով զբաղած է Եղիշէ: Ան ընդգրկած էր ժամանակին իմաստասիրութեան բոլոր ճիւղերը: Այս պատճառաւ ալ կը ներկայանայ իր գրութիւններու մէջ բազմաձևուտ: Ան այս նպատակով են իրեն նաեւ իր ճանապարհորդութիւնները դէպի Պաղեստին, Եգիպտոս, մինչեւ Սինայի: Այս ուխտապնացութիւնները դէպի Ս. Երկրի սրբավայրերն եւ վանական հաստատութիւնները յարաբերութեան մէջ դրած են զինքը հոյ, յոյն եւ ասորի վանականներու հետ. ան անցուցած է անոնց հետ ժամանակ իրրեւ կենակից, աղօթակից եւ սեղանակից: Այդ վանականներու մէջ կային շատ գիտուն անձնաւորութիւններ, անոնց թուին մէջ էր Անաստաս Սինայեցին: Անոնց հետ հաղորդակից՝ պիտի օգտուէր եւ լուսաւորուէր Եղիշէ շատ կէտերու մէջ եւ պիտի սոյթաբէր ինչ ինչ կէտերու մէջ¹: Ասով միայն կրնայ մեկնուիլ այն լուսութիւնը, զոր պահած են իր մասին է.—Թ. զարու մատենագիրները:

Ուշագրութեան արժանի են Եղիշէի Մեկնողական գրութիւնները, որոնց մէջ կը հետեւի ինքը «այլաբանական գրութեան», որուն հիմնադիրն եղած էր Փիլոն Երբայեցի, մատենագիր մը, որուն գրութիւնները հայերէն թարգմանութեամբ այնքան սիրելի եղած են Եղիշէի: Հայ մեկնիչը ոչ միայն այլաբանական մեկնութիւններու կը միտի, այլ եւ գրաւոր տեղիքներու անդիր իմաստներու:

¹ Եղիշէ իր Վարդապետութեան մէջ կը գրէ. «Որպէս ընդ Գրիստոս եւ ընդ իւր զուխն չիք անըզդեութիւն ի մէջ արկանել, եւ ոչ ընդ Գրիստոս եւ ընդ իւր Հայրն, այլ միայն խորհուրդ պատուոյ, զի ուսուցէ զերկոտասանն. յորժամ ինքն յորդին ի խաչին տեսանիւր միայն, խաչակից լինէր եւ Հայր, եւ եթէ Հայրն խաչակից յորդուցն էր, խաչակից էր եւ սուրբ Հոգին. եւ որպէս շարժարակից էին Հայր եւ Հոգի Որդոյ, հաղորդակից էին եւ մեծի յարութեանն: Հայր յարուցանէր, Որդին յառնէր, Հոգին սուրբ տեսնա մատուցանէր արարածոց» (էջ 309): Երկու դեղութեան մէջ անուած հատուածը Վենետիկի (1859) տպագրութեան մէջ գիտամբ դուրս թողուած է, ինչպէս բազմակէտները ցոյց կու տան: Այդ հրատարակութիւնը կատարուած է Վիեննայի Թ. 341 ձեռագրի հիման վրայ. յատուկ բերուած հատուածը կը գտնուի թղ. 70ր: Այս տեղ Եղիշէ վարդապետութիւն մը իւրացուցած է, որ թէպէտ իրրեւ Սարգիսան հերձուած գատարարուած էր Եկեղեցիէն. բայց է. զարու սկիզբը տակաին իր հետեւողներն ունէր յեղեքանդրեա (հիմ. Միքայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, Բ., 330—333, 386 եւ շար.): Եղիշէ թէ ինչպէս յարած է այս տեսութեան, գիտար է մեկնել. կ'երեւայ թէ Եղիպատի Միանձնաց ազգեցութեան տակ գրուած է:

Թախանցել կը ձգտի. այս յատկութիւնը, զոր սուրբ եւ առաքինի անձերու սեպհականութիւնը կը համարի, կը գգայ ան նաեւ իր վրայ:

Այլակերպութեան ճառին մէջ կը գրէ, խօսքը իր ունկնդիրներուն եւ ընթերցողներուն ուղղելով. «Յոյժ կատարած եղեւ մտաց իմոց իրրեւ մերձ եղէ ի կատարած ճառիս. ապա յիշեցի եթէ իրք անխնդիրք մնացին ի միջի սորա. քանզի փոքր ի շատէ տեղեկաւորն եմ խուզող մտաց՝ որ անմեղութեամբ քննեն զգորութիւն րանին ի շահ անձանց եւ ի փոռս սուրբ եկեղեցոյ...: Այլ հարցք եւ խնդիրք վասն ծածկեալ բանին զոր ընթերցուն ի սուրբ Կոտակարանս, գիտեմ զի հարցանեն յայսմ ճառի ցմբխեանս եւ ցիս. Յարեաւ, ստեն, Մովսէս ի մեռելոց մարմնով եւ եկն ի Նարաւ լեան² առ Տէրն մեր... կարի դժուարաւոյն է տեղիդ ստեն: Ինձ ոչ ծանրաւոյն թուի հարցումդ. է ինչ որ ի զրոյ ունիմ առնել անդրէն պատասխանի. եւ է ինչ որ յանդիւր էութենէն՝ հայելով յատուածոյն գորութիւն. եւ ընդդէմք ինչ ոչ են միմեանց. քանզի զիրն ի լսելիս ազդէ զաստուածային պատուրանս, իսկ անգրութիւնն՝ յաներեւոյթ մտացն ստիտակս. եւ են երկուքանս աստուածատուր շնորհք, զոր սաք տեսանեն եւ շրթուք ընթերցուն, ականջք լսեն. ստանց զրոյ միտք բերեն զմեկնութիւն: Արդ քաջ մտաւորացն մեծ է որովայն եւ անձանձորթ է ծոփս. եւ անձանձորանլի է բազմութիւն բեռինն. որչափ եւ անկանի ի ներքս, ոչ յազեալ շատանոց բազմութեամբն. ազաչելով զԱստուած ընկալեալ զերկակն եւ երբեկին կարիցէ հասու լինել. որպէս եւ ի տեսանել, որք ունց զրոյ խորամուխ եղեն ի սէր որդւոյն Աստուծոյ՝ ճշմարտութեամբ հասու եղեն զբերցն, եւ ոչ ինչ ծածկեցաւ ի նոցանէ յանդիւր օրինացն Աստուծոյ. որպէս ինքն իսկ Առաքեալ ասէ. «Ձի այն զոր կամք յօթն՝ որպէս արժանի էր ոչ զիտեմք, այլ ինքն Հոգին հասանէ ի թիկունս՝ ի հեծութիւնս անձուռնչս բառի բնիսուէ առ Աստուած: Ամենայն սուրբ առանց բանի պատմութեան խօսին ընդ Աստուծոյ, եւ անոնց ձայնի արձակելոյ ի վերուստ՝ լսեն կամաց նորա. եւ զոր տեսնեն եւ զոր լսենն՝ ընդ զրով արկանել ոչ կարեն. եւ առաքինի զործովք իւրեանց յայտնի առնեն զանդիւր օրէնսն Աստուծոյ: Եւ յորժամ զպսպիտի զօրութիւն յոգին մեր հետագտեմք, կարեմք զծածուկս րանին Աստուծոյ ծածկապէս իմանալ, եւ զտուրութիւն պարզելին սր շնորհեաց մեզ՝ արտարեմք բարբառով. զի եւ յայլոց լսելիս ազդեցէ հնչումն երկնաւոր» (էջ 232—233):

Այսպէս նաեւ Ղազարու Յարութեան ճառին մէջ. «Քաջ միտ դիւր, աղաչեմ, յորժամ յատուածային գիրս մխեցին ընթերցուն եւ իմանալ զգորութիւն րանիցն, զիւր մի ձայնուոր մի անցցէ զմտօք քոյովք. ամենայն շարագրածքն յղի են երկնաւոր իմաստութեամբն, եւ ճաննին գրանս հողեւորս իմաստուն մտաց. առ վատուածունսն ամբանս եւ առ քաջունական յիշատակաց՝ բազմորդի լինին. այնպէս եւ ի լսելիս իւրաքանչիւր, որոց առողջ են քիմք ականջացն, բոտ այնմ եւ համազաւթն անուշանս մտացն» (Մամբրէ, էջ 30):

² Իմացիր՝ ի Նարաւ (Գեղնիկ) ի լեան թաքոր:

Անգիրը կարգալու իր արուեստը կը յուսադրէ Եղիշէ մասնաւորապէս իր Վարդապետութեան, Այլակերպութեան եւ Ղազարի յարութեան ճառերու մէջ, որոնք Նոր կտակարանին կը հային: Յանիրաւի «անհարպատ» հռչակուած են ասոնք: Եղիշէի ոգին, արուեստը, կարողութիւնը առաւելապէս ա'յս գրուածքներու մէջ երեւան կու դան: Հայ գրականութեան մէջ անոնք ջղուազոհարներ են:

Բայց Եղիշէ իր համբաւը կը պարտի յատկապէս իր պատմական գրուածքներուն, որոնք են Վկայարանութիւնն Վարդանանց եւ Ս. Քահանայից, եւ Պատմութիւնը Հայոց պատերազմին: Մինչ առաջինի մէջ կախում ունի Ղ. Փարպեցիէն, երկրորդին մէջ ինքնակայ է: Առաջինը կիսով հասած է մեզի, իսկ երկրորդը խմբագրուած ձեւի մէջ: Երկուքը այժմ մէկ ներկայացուած է մեզի: Այս միութեան առաւելութիւնն է, որ Երկրորդին թեթեւութիւնը կը ծածկուի. եւ հեղինակին հմայիչ ոյժը, որ առաւելապէս արտայայտու արուեստին մէջ կը կայանայ, կը շարունակէ մոգել ընթերցողները: Արդէն շօշափած նիւթը հետաքրքրաշարժ է յինքեան, ազատագրութեան շարժումի պատմութիւն, նկարագրուած կենդանի գոյնով, ճարտարախօս լեզուով, բանաստեղծի աւելումով, եւ անչափ ոգեւորութեամբ: Գրուածքս պահած է իր կենդանութիւնը դարերու ընթացքին եւ կարգացուած է ախորժով, վասն զի հայ ժողովուրդը ապրած է գրեթէ միշտ նոյն պայմաններու մէջ, որոնց նկարագրութիւնը տուած է հոս Եղիշէ: Անոր ձայնը դեռ այսօր խրախոյս կը շնչէ մարտիկներուն, մխիթարութիւն այրիներուն, յոյս ընկճածներուն:

Իր դրչին տակ դասական կնիք ունի լեզուն, բայց միաժամանակ հակում նորարանութիւններու — զորոնք թիւած էր հելլենական Դպրոցը — բայց այս այնպիսի չափով մը որ ճնշիչ ազդեցութիւն չի գործէր մեր վրայ: Նոր այբուբանը մատակարարուած էին հոյ գրականութեան, իմաստասիրական, բնագանցական, աշխարհախօսական, ճարտասանական, նորաձեւ քերականութեամբ եւ նորաձոյ բառամթերքով: անոնց ուսումնասիրութիւնը, ստացուած նոր մտքերը պիտի պահանջէին արտայայտութեան համար նոր բառեր, մասնաւորաբար վերացիալ գաղափարներու համար:

Պէտք չէ աչքէ հանել, որ հեղինակը միանձնաւոր մըն է, աւետարանին քարոզիչը. եւ թէ ան կը ձեռնարկէ գրել Պատմութիւն, իր նպատակը պատմելէ աւելի «ճառագրել» է: Այս պատճառաւ ալ խոյս տուած է մանրամասնութիւններէ պատերազմական արուեստի, գործողութիւններու, քաղաքական դորձանունութիւններու մասին: Անփոյթ դտնուած է նոյն իսկ ինամուած ժամանակագրական ցուցմունքներու, թող կողմնակի հարցերը ժողովուրդի եկեղեցւոյ եւ եկեղեցականներու կացութեան նկատմամբ: Կը պակսին նաեւ հերոսներու ցայտուն դէմքեր: Իբրեւ պատերազմական գործողութիւն երկու ճակատի նկարագրութիւն միայն կը դտնենք հոն, Արտաշատի եւ Սաղամախեաց դաշտի ճակատամարտները:

Հեղինակը կը ներկայացնէ ինք զինքը «ականատես» Հայոց պատերազմին. բայց չենք տեսներ իր անձը պատերազմին մէջ որ եւ է դերով. չի տեսնուիր ան ուղիղ կատին վրայ, բանակին մէջ, փախտականներու թիւին, կալանաւոր զօրականին, շղթայակապ քահանաներու խումբին մէջ. վրիպած է ան թշնամուցն աչքէն: Թէպէտ ծանօթ է Քուշանաց սահմաններու վրայ, միջնաշխարհին մէջ, Տիգրոսի արբունիքը տեղի ունեցած անցուդարձերուն, բայց չի յիշեր որ եւ է տեղեկատու, որ հաղորդած ըլլայ իրեն տեղեկութիւններ. ուստի պէտք է եւթագրել զինքն օժտուած ամենուրեքութեամբ: Կարելի չէ մատնանշել որ եւ է զօրավար, զօրական կամ եկեղեցական, որուն հետ ան չփուս ունեցած ըլլայ: Հոտորարան է, բայց չէ երեւցած հրապարակի վրայ բեմբասացութեամբ: Հանդամանքներ, որոնք կասկածելի կ'ընեն իր ականատես եւ ժամանակակից ըլլալը:

Ձինքը կը հետաքրքրեն ամէնէն աւելի խորիստ թագաւորը, նենգաւոր Միհրնեստէս, անոր նամակը, Հայոց Պատասխանը, Մոզպետին ճառը, Վարդանի եւ Ղեւոնդի բանաստեղծութիւնները, Վասակ Սիւնուոյ չարութիւնը: Վկայաբանութեան մէջ՝ Սահակի, Ղեւոնդի եւ Յովսէփի հարցաքննութիւնները: Այս տեղ հեղինակն ինքն է, որ հարցեր կը ստեղծէ եւ պատասխաններ կը յօրինէ, հերքելու գրադաշտական դեմին առարկութիւնները եւ պաշտպանելու քրիստոնէական վարդապետութեան տեսակէտները: Ասոնց ձեւն

ու եղանակը ցոյց կու տան թէ հեղինակը ելած է հոտորական դարոցէ, հմուտ է աստուածաբանական, կրօնապատմական, աշխարհախօսական մակացութիւններու: Ասոնք սեղանի առաջ, գրքերէ քաղուած մտքեր են, ձեւի բերուած նմանութեամբ քրիստոնէայ մարտիրոսներու հարցաքննութիւններու:

Եթէ նկարագրութեան անցնինք նկարագրուածի արժէքին, պիտի ներկայանայ մեղի հեղինակը պատմագիր ըլլալէ աւելի հոտոր: Այս պատճառաւ իր արժանիքը գլխաւորաբար ոճարանութեան մէջ պէտք է փնտռել: Եղիշէի ձգտումը եղած է պատմական դէպքերուն ներքողականը հիւսել: Պատերազմին մասնակցողներուն ճակատը լուսապսակել, դասալիքներուն պարսաւը յօրինել, ազատագրական շարժման կրօնական նկարագիր տալ, ամբողջէն վկայարանական Յիշատակարան մը կատուցանել:

Բ. ԳՐԵԿԸՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

1. ԵՂԻՇԷԻ ՎԱՐԳԱՊԵՏԻ (ՊԱՏՄՈՒԹԻՒՆ) ՎԱՍՆ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ Ի ԵՆՏՐՈՑ ԴԱԽԹԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ:

Սկ. «Ձրանն, վասն որոյ պատուիրեցեր, ու Քաջ, արարի վասն Հայոց պատերազմին, գոր հրամայեցեր...»:

ՎՂ. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա... եւ մի լիցի ցանկացող գործոց նորա»:

Այսպէս կ'աւարտի է. Յեղանակը, որուն կը յաջորդէ «Արտաքոյ եւթն յեղանակի (կարգա՛ յեղանակաց) ութերորդ»:

== Ձեռագիրներու, հրատարակութիւններու եւ թարգմանութիւններու մասին տես §§ 10—12 մեր Ուսումնասիրութեան:

Եղիշէ գրած էր ուրոյն աշխատութիւն մը Վարդանանց եւ Ս. Քահանայից չարչարանաց եւ կատարման մասին հետեւողութեամբ Ղազար Փարպեցւոյ: Այս աշխատութիւնը կ'երեւայ թէ հաճոյացած է Դաւիթ Մամիկոնեանի, որ եւ ցանկացած է ունենալ նոյն ոճով գրուած Պատմութիւն մ'ալ երկրորդ «Հայոց պատերազմին» որ տեղի ունեցած էր 573ին Արտաշատի առաջ Սաղամախեաց դաշտի վրայ, Վասակեան Վարդան Մամիկոնեանի սպարապետութեան տակ: Իր խնդիրքը յանձն առած է Եղիշէ, ոչ առանց գեղեւանքի: Իր Ընծայականին մէջ կը մեղադրէ իր Մեկենասը, թէ այսպիսի գործ մը ինչո՞ւ իրեն

կը յանձնարարէ գրել, երբ ինքը Մեկենասը դէպքերուն աւելի տեղեկակ է եւ գրելու ալ ընդունակ. «Այլ դու, ու մեծդ ի քիտութեան Աստուծոյ, առ ի՞նչ արդեւք հրամայեցես, քան թէ հրամայիցիս լուսաբունացն»: Եղիշէ կը զիջանի ձեռնակել գործի, նկատելով, թէ ան պիտի հայթայթէ «միթիթարութիւն սիրելեաց եւ յոյս յուսացելոց, քաջաբերութիւն քաջաց»: Այս պատճառաւ ալ պիտի ճախրեմ, կ'ըսէ, «բարձրաթոխս եղեալ զամենայն վրասակար մրրկածին օգովք զանց առնիցեմք (տպ. անցուցանիցեմք) եւ փոքր ի շատէ ծծելով յանապական վերին օգոցն՝ առնուցումք զգիրութիւն ի փրկութիւն անձանց մերոց եւ ի փառս ամենայաղթ Եկեղեցւոյ»:

այս ինքն առանց պատերազմական շարժումներու մանրամասնութիւններու, կուսակցական խնդիրներու միջամուխ ըլլալու, պատճառաւ աղէտներու նկարագրութիւնն տալու, նկատի պիտի առնուի պատերազմին նպատակին հոգեբանութիւնը, որ է քրիստոնէական եկեղեցւոյ ազատութիւնը եւ անոր համար նահատակութիւնը: Այս էր 571, փետր. 3ի Հայոց ազատամբութեան նպատակը: Խոսքով Ա. Անուշըռուան, Սասանեան հօր արքայն (532—579) կը հրամայէ քրիստոնէայ Հայաստանի ուրանալ քրիստոնէութիւնը եւ ընդունիլ զրադաշտական դէնը, կործանել եկեղեցիները եւ կանգնել ատրուշաններ: Բիւզանդիոն կը խոստանայ Հայոց իր զինուորական օգնութիւնը: Բայց 573 դարնան, կը ստիպուին Հայերը, առանց արտաքուստ թիկունք ունենալու, իրենց սեղահան ոյժով բախելու պարսիկ անհաւատար ոյժին հետ: Թէպէտ թշնամուցն կորուստը մեծ կ'ըլլայ, բայց իրենք ի վիճակի չեն ըլլար երկրորդ որոշիչ ճակատ մը տալու եւ կը ստիպուին գիշերախան լքել ճակատավայրն եւ դիմել փախուստի: Պատերազմը կը շարունակուի, այժմ Պարսից եւ Յունաց մէջ Հայաստանի շուրջ, որ 20 տարի կը տևէ:

Այս «Հայոց պատերազմի» մասին պիտի «ճառագրէր» Եղիշէ: Ան կը խոստանար «ճառագրել» եւ ոչ պատմագրել: Պատմագրութիւնը իր սրտին մօտ չէր:

- Ա. Ժամանակն.
- Բ. Իրացն պատահումն յիշխանէն Արեւելից.

- Գ. Միարանութիւն Ուխտին Եկեղեցւոյ.
- Դ. Երկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ.
- Ե. Յարձակումն Արեւելեաց.
- Զ. Ընդդիմանալն Հայոց Պատերազմաւ.
- Է. Յերկարումն իրացն խոռովութեան:

Որովհետեւ ճառագրել էր իր նպատակը, ընծայած է այս եօթը գլուխները կամ «յեղանակները» ինչպէս կը սիրէ կոչել, իբրեւ մի մի ճառ, առանձին մուտքով: Պատմական դէպքեր հոն երկրորդական տեղ կը գրաւեն, զօրավարները չունին հոն իրենց դիմանկարները. ոյժ տուած է նկարագրել բռնաւորին սպառնալիքները, անոնց հանդէպ հայ ոգւոյն կեցուածքը, հոգեկան բարձրութիւնը, հաստքի մէջ ամբուութիւնը. կրօնի ջատագովութիւնը, պարսիկ դէմին հերքումը, զօրավարին եւ զինուորներու սէրը նահատակութեան եւ այլն: Այս ամէնը կը հետապնդեն ընձեռել ընթերցողներուն հոգեշահ մատեան մը, որպէս զի «բազում սուրբ պաշտօնեայք զուարթութեամբ կատարեցեն զսպասս վիճակին իւրեանց» (էջ 5—6):

Միանձնաւորը, եկեղեցւոյ վարդապետը, ճարտարախօս քարոզիչը կը ճառախօսէ հոն եւ իր ունկնդիրները կ'ողբզղինէ յանձն առնելու մահը քան տեսնել եկեղեցիներու աւերակները:

Եղիշէի այս Մատեանը իր սկզբնագրի մէջ պահուած չէ մեղի: Այժմ մեր ձեռքը հասած օրինակները կը ներկայացնեն խմբագրութիւն մը անձանօթ ձեռքէ, որ 570—578 տարներու Պատմութիւնը վերածած է 450—451 տարիներու Վարդանանց պատերազմի պատմութեան: Ան ջանք տարած է Պատմութեան տարրները սլաճեւել, եւ այդ ատաղձով եւ Ղ. Փարպեցիէն եւ Եղիշէի Վարդանանց Պատմութեան քաղուած հատուածներով նորաձեւ Վարդանանց պատմութիւն մը յերիւրել: Արդէն 1885ին գերմանացի քննասէր մը P. Vetter զգացած էր թէ «քննական տեսակէտով աննշանակ դժուարութիւններ չի յարուցաներ գրութիւնս (Ուսումնասիրութիւնք, էջ 109): Հայ բանասէրները այս հարցին մերձեցան առաջին անգամ 1895ին. իսկ Բարդէն Վ. Կիւլէսէրեան նուիրեց անոր ամբողջ մենագրութիւն մը (§ 5): Կային Եղիշէի մէջ հատուածներ, որոնք բառ առ բառ նոյն էին Մ. Փարպեցւոյ հետ. կային հոն նաեւ այնպիսիներ, որոնք անձանօթ էին

Փարպեցույ: Եթէ առաջին կէտին մէջ Եղիշէ բանաքաղ կը ձաղուէր, երկրորդին մէջ ան ինքնակայ կ'երեւար անմեկնելի կերպով: Այս գաղտնիքը լուսաւորելու պիտի ծառայէր իմ Ուսումնասիրութիւնս: Եղիշէն իր մէջ մի հատուածներու մէջ քննութեան առնուելով, երեւան եկաւ իր ներկայ ձեւին մէջ խմբագրութիւն, որ կ'ենթադրէր սկզբնաղբը մը, ուր 532—578 տարիներու պատմական հոդն իրեն յատակ ունէր, յատկապէս 570—578 տարիներու դէպքերը: Հիմնուած ներքին եւ արտաքին աղբիւրներու վրայ ջանադիր եղանք վերակազմել Եղիշէի Սկզբնաղբը, որչափ հնարաւոր եղաւ:

Ի սկզբան մեր համոզումն էր, թէ Եղիշէ իրրեւ ազանատես գրի առած է տեսածներն եւ լսածները: Բայց այժմ ան կը ներկայանայ է. դարու երկրորդ եւ երրորդ քառորդներու մատենագիր: Ուստի հարկ է ենթադրել իր ձեռքին տակ գրաւոր եւ անգիր աղբիւրներ: Գրաւոր աղբիւրներէն մին ըլլալու է Արբանձակ Մամիկոնեանի Պատմութիւնը (§ 48, 12). իսկ անգիր աղբիւր ծառայած ըլլալու է ամէնէն աւելի Դաւիթ Մամիկոնեան կամ իրրեւ ազանատես եւ կամ իրրեւ ազանջալուր վկայ: 570—630 միայն 60 տարուայ միջոց կ'ընդգրկէ:

Եղիշէ կարգացած էր Ղ. Փարպեցույ Բ. եւ Գ. դրուադները. բայց ան իր այս աշխատութեան համար անկէ հիւթ չէր կրնար ծծել: Կարգացած էր նաեւ հին եւ նոր հայ հեղինակներն եւ թարգմանական մատենագրութիւնը. մեծապէս ազդած են իր վրայ դասական չըջանի գրականութիւնը, մասնաւորապէս Յովհ. Ոսկերեանի, Եւսեբիոս Եմեսացուի եւ Սերբիանոսի մեկնողական եւ ճատական գրութիւնները: Նորագոյն թարգմանութիւններէն յատկապէս սիրելի եղած են իրեն Փիլոնի գործերը: Մանր քննութեան կը կարօտի մի առ մի ցոյց առլ հետքերը այդ գրականութեան Եղիշէի Պատմութեան եւ առհասարակ Մատենագրութեան մէջ: Այս տեղ մատնանիշ պիտի ընեն այն աղբիւրները միայն, որոնց ուշադիր եղած են նախորդ քննիչներն եւ պատահարաբար ես:

1. Աստուածաշունչ Մատենան, յատկապէս Մարգարէից եւ Մակարայեցուց գրքերը¹:

¹ Ս. Թ., Եղիշէի եւ Մակարայեցուց գրքերի յարաբերութեան խնդիրը: Արարատ, 30 (1896), 553—556: Նոյն, Մարգարէից Գրքերի հետքերը Եղիշէի Պատմութեան մէջ, անդ, 31 (1897), 211—212:

2. Ազաթանգեղոս²:
3. Եղիշէ (§ 38, 4. եւ § 5, ծան. 12):
4. Մարութայի Վկայք Արեւելից³:
5. Յովհ. Ոսկերեան, Մեկնութիւն Մատթէի⁴:
6. Որկար Իմաստուն⁵:
7. Եւազր Պոնտացի⁶:
8. Մտոյն Կալիսթենէսի Վարք Աղեքսանդրի⁷:
9. Վկայարանութիւն Ս. Փոկասու (§ 36, Ժա):
10. Վարք Գրիգոր Աստուածարանի⁸:
11. Յաճախապատում⁹:
12. Փիլոն Երրայեցի¹⁰:
13. Անանիա Շիրակացի (§ 40, 4):
14. Եղիշէ, Վկայարանութիւն Ս. Վարդանանց եւ Ս. Բահանայից (§ 40, 1 եւ § 41):

Եղիշէի Պատմութեան հայոց գրականութիւնը տուած ենք վերագոյն § 5: Նորագոյններուն պիտի անգրագատնանք Յաւելուածին մէջ:

Բոլոր ձեռագիրները, նաեւ ձառնուորներու մէջ առնուած հատուածները խմբագրուած Եղիշէն աւանդած են մեզի: Հնագոյն օրինակներն են Ամիրտօրու վանքին ձեռագիրը 1130էն, Գէորգ դպրի տեսած օր-

² Հմմտ. վերը § 51, ծան. 10—13: Ազաթ. 120 «Մեր սուրբս բթեցան եւ նոքա ոչ զարհուրեցան ի մեռանելոյ»: Մարութայ, «Բթեցան երկաթքն ի հատանել եւ նոքա ոչ կանեցան ի սիրոյ»: Եղիշէ, 46: «Սուրբ սպանողացն բթեցան եւ նոքա պարանոցք ոչ ձանձրացան»: Հմմտ. նաեւ Ազաթ. 80. «Աման չարի գոտեալ գթագաւորն»: Եղիշէ, 159. «Եւ եղեւ աման չարին»:

³ Հմմտ. Չ. Ն. Անդրիկեան, Բազմավէպ 1905, էջ 359. Բ. Վ. Կիւլէսէրեան, Եղիշէ, էջ 146—149:

⁴ Ք. Լեւոնեան, Եղիշէ եւ Ոսկերեան, Բազմավէպ, 1917, էջ 107—108: Հմմտ. նաեւ § 40 (էջ 633):

⁵ Որկար, 134 = Եղիշէ, 13. «Կաւ է կոյր աջօր քան կոյր մտօք»: Հմմտ. Չ. Թ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ, Բ., 126:

⁶ Եւազր, 82. «Ի խորհրդական պատկանդարանէ անտի նետիք իւրովք խոցոտէ գվիշապն»: Եղիշէ, 7. «Ելլոյ զնա իրրեւ գպատկանդարան գեղեալ նետիք»:

⁷ Հմմտ. Չ. Թ. Տաշեան, Ուսումնասիրութիւնը Մտոյն Կալիսթենէսի, էջ 84: Բազմավէպ, 1905, Բ. 6, չափիկ, էջ 9—7: Եղիշէ, 84 = Կալիսթենէս, 134. «Մեկնէն բլուրք» տեղիքս մուծած է Կալիսթենէսի մէջ Պաշտօնը Կեչառուեցի, Վիեննայի Թ. 947 Նախակէզառուեան օրինակին մէջ կը պակսի նոյնը: Հմմտ. § 51, ծան. 8:

⁸ Վարք եւ Վկայարանութիւնք Սրբոց, Ա., 285. «Եւ արդ սկիզբն արասցուք ուստի սկսանելն վայելչապէս արժան է»: Եղիշէ, 6. «Արդ... սկսցուք ուստի արժան է սկսանել»: (Եղիշէի) Թուղթ Ա. Գիւտայ եպիսկոպոսի. «Եւ սկսանիմ ուստի արժան է սկսանել»: Մովսէս Դաւիթբեկեանի, Ա., 11, էջ 15:

⁹ Յաճախապատում, 1 = Եղիշէ, 85. «Ոչ նորագի, զի ոչ հնանայ»:

¹⁰ Հմմտ. Բ. Վ. Կիւլէսէրեան, Եղիշէ, էջ 160—164: § 40, 3:

նակը 1167էն (որուն համաձայն կատարուած է 1781ի սպագրութիւնը) եւ Էջմիածնի Թ. 1890, դրուած 1172ին: Այնուհետեւ կ'աճին օրինակները (տե՛ս § 10): Իրը ժէ. դարէ պատմասէր մը, որ կազմած է հայ պատմագիրներու ցուցակ մը («Պատմագիրք Հայոց») կը գրէ Եղիշէի մասին. «Եղիշէ վարդապետ, որ է Պատմութիւն նահատակութեան սրբոց Ղեւոնդեանցն եւ Վարդանեանցն: Թէպէտ եւ գպատերազմունան սրբոցն Վարդանայ, որ նախ քան զնահատակիլն ըստ պատմագրաց, այժմ ոչ գտանի ուրեք, զոր արարեալ է եւս սրբոցն Եղիշէի» (Էջմիածին, Թ. 2271, թղ. 218ա):

Եղիշէի Պատմութիւնը առաջին անգամ յանուանէ կը յիշատակուի Թոմաս Արքրուսիի քով, Ժ. դարու սկիզբը: Նոյն դարուն կարգացած է գայն նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոս, որ իւրացուցած է անկէ տեղիքներ, առանց աղբիւրը մատնանշելու: Կ'երեւայ թէ ձեռքի տակ ունեցած է գործս նաեւ Մովսէս Խորենացի (850)¹¹: Ի հարկէ դժուար է ճշդել թէ Մովսէս եւ Յովհաննէս կաթողիկոս Սկզբնագիրն ունին իրենց ձեռքը, թէ խմբագրուած օրինակը: Թոմայի մատչելի եղած է երկրորդը:

Ինձի կ'երեւայ թէ Սերիոս աչքի առաջ ունեցած է Եղիշէի Պատմութիւնը նաեւ իր Պատմութեան Բ. մասին նախադրութեան մէջ. այս տեղ նախադասութիւնս «Եւ բարեպաշտութիւնն եւս քան զեւս ծաղկեալ պայծառացաւ» յարասութիւն մըն է Եղիշէի տեղիքին. «Եւ աստուածաշունչութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երեւելի լինէր» (7). բայց այս նախադասութիւնը Սերիոսի քով տեղէն խախտած է:

Սերիոսի Նախերգանքը իր սկզբնական ձեւին մէջ պահուած չ'երեւար. կրած է փոփոխութիւն երկրորդ ձեռքէ. համապատասխան եւ ընդարձակուած է: Կը համադրեմ այս տեղ Սերիոսի եւ Եղիշէի բնագիրները դէմ առ դէմ.

Սերիոս 22—23.	Եղիշէ, 4.
Եւ եղեւ ի նուազել ժամանակաց տէրութեանն զին Արշակունեանց՝ տիրեալն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, տան աշխարհի:	«Քանզի ի բառնալ սոց զին Արշակունեանց՝ տիրեալն աշխարհիս Հայաստանս սոսանայ պարսկի,

¹¹ Հմմտ. § 51. ծան. 10. եւ Մ. Արեղեան, Արարատ 1899, էջ 530—531:

Ի բառնալ տէրութեանն զնուազարուս արքայի՝ թիւնն օրինօք մողոց. եւ տիրէ ի վերայ սորա Յագլիքս որդի վաւալայ¹² | | | < մինչեւ ցեազկերս Բ. որդի վաւալայ. սորա յԺժժ Եղիշէի յարեալ յամացն ամի իւրոյ > իշխանութեանն խորհուրդ ի ձեռն որդոյն Տիրանայ (2. 'Տրդատայ) եւ կուէր մինչեւ ցամաք վեցերորդ Արդանաշունչ եւ մեծամեծ տաշխի արքայի Հայոց քաղէիցն եւ ամենայն սրբոցն վաւալայոց (2. զլիւսոր նախարարացն¹³ իսկ առլ. Ստահրապոյց): Թագաւորութեան իւրոյ՝ եւ իրրեւ զնա եւս մերբառնալ ի Հայաստան աշխարհի զարեպաշտութեան պտուղս¹⁴: Ուստի ոչինչ օգտեցաւ, այլ յոյժ վնասեցաւ: Եւ բարեպաշտութիւնն եւս քան զեւս ծաղկեալ պայծառացաւ:

որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մողոց. եւ բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ (Գ.)՝ արքայի Արզուրդ ի ձեռն որդոյն Տիրանայ (2. 'Տրդատայ) եւ կուէր մինչեւ ցամաք վեցերորդ Արդանաշունչ եւ մեծամեծ տաշխի արքայի Հայոց քաղէիցն եւ ամենայն սրբոցն վաւալայոց (2. իսկ առլ. Ստահրապոյց): Թագաւորութեան իւրոյ՝ եւ իրրեւ զնա եւս մերթառնալ ի Հայաստան աշխարհի զարեպաշտութեան պտուղս¹⁴: Ուստի ոչինչ օգտեցաւ, այլ յոյժ վնասեցաւ: Եւ բարեպաշտութիւնն եւս քան զեւս ծաղկեալ պայծառացաւ:

Սերիոս կը շարունակէ պատմել միւսանգամ.

Արդ զժամանակս Թագաւորութեանն շարադործին Յագլիքսի, եւ եթէ որպէս նա կամէր զաստուածայինն եղձանել կարգու...: Վ. թ. տեղոսն որ կուի Թէպարտնի:

Այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ: Որպէս եւ ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն, բայց զայն ամենայն որ ի Պերդի ժամանակն եղեալ շարութիւնն...: Վ. Չայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճաւոր ձեղ վիպասանել» (24):

Վաւալայուս վախճանած է 409/10ին: Իր որդին Արտաշէս գահ բարձրացաւ իր 10 տարի ետքը: Սերիոս իր Պատմութեան Ա. մասին մէջ, ուր հնագոյն աղբիւր մը կը

¹² Այսպէս կը կարգամ սպառազուած բնագիրը ազգն կարեղովմայեցի.

ԱԶԳՆ ԿԱՐԳ Ե ԴՈ Վ Մ Ա Յ Ե ՅԻ
ՅԱԶ ԿԵՐՏ ՈՐԴԻ ՎՐԱՄԱՅ

խօսքը Յագլիքս Ա.ի, Վաւալ Դ. Կրժան(չահ)ի (կամ Երթոբ § 21, գ) մասին է, որ Թագաւորեց 399—419:

¹³ Տպ. նախադասութիւնն:
¹⁴ Կա՞րդս, պաշտօնէն:

գործած է, անձանթ մնացած է Արտաշէսի թագաւորութեան: Թագաւորս կը յիշուի առաջին անգամ Կորիւնէն (ԺԴ. 10) . Մաշտոց Հոռմէական Հայաստանէն վերադարձին գտած էր զանիկա թագաւորական գահին վրայ . եւ ապա Եղնիկ երէցէն: Իսկ անոր գահակալութեան «2» տարիները կը յիշեն միայն Եղիշէ եւ Կեղծ-Ղազար Փարպեցի . վերջինս ուսած հաւանօրէն առաջինէն: Ի՞նչպէս այն անձանթ մնացած է Սերիոսի: Ինձ անմեկնելի է: Այս տարիներուն Պարսից թագաւորն էր Յազկերտ Ա . որդի Վուսայ (399—419): Իր յաջորդներու օրով, մինչեւ 451 ինչպէս Եղիշէ կը գրէ, այրուածին հայ սպարապետի տակն էր: 408—450 տարիներուն իրօք ալ «բարեպաշտութիւնն եւս քան զեւս ծաղկեալ պայծառացաւ» . բայց ոչ 450—457, երբ հալածանքի մէջ էր Եկեղեցին: Որպէս զի Սերիոսի Նախերգանքն այս խմատը ստանայ, հարկ է ենթադրել թէ սկզբնապէրը հոս ենթարկուած է փոփոխութեան, կրճատումի:

Շարունակութիւնը կը շօշափէ միւսանդամ Յազկերտի հալածանքը, որ կարճատիւ պատմուած էր արդէն: Սերիոսի գրչէն չէ այս հատուածը . պատմագիրը չի սիրեր յունարան դարձուածքներ . ան հետեւող մըն է դասական հայերէնի . ուստի օտար են իր գրչին «եթէ ո՞րպէս նա կամէր գաստուածայինն եղծանիլ կարգս» (22) եւ «ո՞րպէս ի դիմի հարեալ զերեանց կատարեցին զնահատակութիւն» (23) շարադասութիւնները: Այդ անձանթ գրիչը Ղ . Փարպեցին ունի իր աչքի առաջ . ինչպէս վերագոյն (§ 3) ակնարկեցինք, «Թէարքունի» աղաւաղութիւնը նկատու է Ռեւանդ գիւղի, զոր ունի միայն Փարպեցի:

«Այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ» փոխառութիւն է Փաւստոսէն (Գ. 1. «Այն ի ձեռն այլոց[ն] գրեցան», «այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ»), զոր ձեռքի տակ ունեցած է Սերիոս: Իսկ «Որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն» հաւանօրէն կը պատկանի յաջորդ նախադասութեան . որով կ'ուզէ ըսել . «Ինչպէս Պատմութեանս ընթացքէն պիտի տեսնուի, իմ նպատակս է նկատի առնել Պարոզէն սկսեալ շրջանը»:

Այդ ակնարկուած «այլք», որոնք պատմած են Յազկերտի հալածանքի մասին, անշուշտ են Ղ . Փարպեցի եւ Եղիշէի Վարդանանց եւ Ս . Քահանայից Վկայարանութիւնը:

Սերիոս գարմանալի կերպով լուծ է, որ Ղ . Փարպեցի նաեւ Պերոզի թագաւորութեան շրջանը նկատի առած էր իր այժմեան Գ . դրուագին մէջ: Ան նոյն իսկ անձանթ եղած կը թուի Փարպեցուց գրութեան, որովհետեւ իր պատմածները չեն միարանիւր Փարպեցուց հաղորդած տեղեկութիւններուն:

Եղիշէի Պատմութեան մտաբը, ինչպէս գծիկներով մատնանիշ ըրի, կրճատուած է . ան Սկզբնագրին մէջ պէտք է համառօտիւ խօսած ըլլար Յազկերտ Բ ., Պերոզի եւ Կաւտի օրով տեղի ունեցած անցքերու վրայ . շարունակութիւնը կը հայի Սոսրով Ա . Անուշըրուանի:

ԽՄԲԱԳԻՐԸ

Եղիշէ գրեց իր Պատմութիւնը Դաւիթ Մամիկոնեանի խնդրանքով իր 640ին: Ան Մամիկոնեաններու փառքը կ'երգէր, վերջին անգամ: Անոնք տակաւին քաղաքական ասպարէզի վրայ էին . Մուշեղ, Համադասպ, Գրիգոր հաւանօրէն եղբարք եւ որդիք Դաւիթ Մամիկոնեանի: Հայաստան 571էն ի վեր այլ եւս կղզիացեալ զերքի մէջ չէր: Կ'իշխէին երկու քաղաքական աշխարհայեցողութիւններ . միտում դէպի յունական-կայսերական քաղաքականութիւն, եւ բերում դէպի պարսկական, ապա արաբական քաղաքականութիւն: Մամիկոնեանները յարած էին առաջնոյն . եւ ունէին իրենց մրցակից Բագրատունիները, որոնք կը հակէին պարսկական-արաբականին: Այս երկու մրցակիցներու բախումը անխուսափելի էր: Ժամանակը Բագրատունիներու ի նպաստ կը գործէր . որովհետեւ Արաբները օր աւուր գզալի կ'ընէին իրենց ազդեցութիւնը արեւելքի եւ արեւմուտքի վրայ: Բելգանդական պետութիւնը պաշտպանողական դիրքերու մէջ կը գտնուէր: 772ին Սմբատ Մամիկոնեանի յանդուգն փորձը՝ թօթափել արաբական լուծը, ձախողեցաւ . որուն հետեւութիւնն եղաւ յետս ընկրկում քաղաքական ասպարէզէն: Մամիկոնեանները անհանդուրժելի նկատուեցան այնուհետեւ ամիրապետներէն: Բագրատունիներուն մնաց ասպարէզը իր բովանդակ տարածութեամբ: Յունասէր Մամիկոնեանները հալածուեցան ոչ միայն քաղաքական մարզի վրայ, այլ եւ ջանք տարուեցաւ գրաքննութեան ենթարկել հայ գրականութիւնը, պատմութեանն անյիշատակ ընելու անոնց

1587-63

մեծագործութիւնները 571էն ի վեր: Առաջին հարուածը ընդունեցաւ Եղիշէի Պատմութիւնը:

Այս տեղ շարժման գլուխն էր Քաջն Վարդան Մամիկոնեան, որ նիզակակցութեան դաշինք կը կնքէ կայսեր հետ . կ'որոշուի Պարսկահայաստանը ենթարկել կայսեր գերելխանութեան: 573ին Հայոց ընտիր դասակարգը եկեղեցականներու հետ կը դադրէ կայսերական հող . Վարդան եւ իր զօրականները կը նիզակակցին կայսերական բանակին ընդդէմ պարսկականին: Հայ եկեղեցականները հաղորդակցութեան մէջ կ'ըլլան Յունականներու հետ: Ապստամբութիւնը որ ձեռնարկուած էր ազատութեան ի խնդիր, բերած էր երկրին աղէտ, թշուառութիւն, աւեր, կոտորած, ամայութիւն եւ ի վերջոյ հակամարտութիւն թէ քաղաքական եւ թէ կրօնական հողին վրայ:

Իսկ այդ ապստամբութեան պարագլուխները, որոնք երկիրը սուրի մատնած՝ իրենց փրկութիւնը օտարութեան մէջ փնտռած էին, Եղիշէն իրրեւ հերոսներ կը պանծացուէին, իսկ պատերազմի դաշտի վրայ ի ինկածները նահատակութեան լուսեպսակներով կը պատուէին: Ընդհակառակն անոնք որոնք իրրեւ պարսկաձէտ՝ աղէտը կարճելու, ահաւոր թագաւորին բարկութիւնը շիջելու հօգը տարած էին, կը դարձուէին իրրեւ ուխտանեղ, թերահաւատ, վատթար: Անոնք թուին մէջ էին Բագրատունիները:

Մօտաւոր անցեալի իրագործութիւններ . որոնց մասնակիցները ունէին որդիներ եւ թոռներ, իւրաքանչիւրն իր աւանդութիւններով: Եղիշէ թարգմանն եղած է Դաւիթ Մամիկոնեանի տոհմիկ աւանդութիւններուն: Կարելի էր անշուշտ այդ Պատմութիւնը քաշել հրապարակէն եւ ի հուր մաշել: Բայց հեղինակին գեղեցիկ ստեղծագործութիւնը շարժած է գութ: Փոխանակ ոչնչացնելու՝ խորհուած է անջնաս ընել զայն, նոր խմբագրութեամբ վերընծայելով իրրեւ Վարդանանց Պատմութիւն:

Թէ Եղիշէի Պատմութիւնը այսպիսի փորձանքի մ'ենթարկուած է, գիտէ աւանդութիւնը, որ Բարձումայ Ասորւոյ ձեռքը ցոյց կու տայ (§ 8): Թէ ասորի մըն է այդ խմբագրութեան խմբագրիչը, կը զգացուի ամէն քայլափոխին: Ան լաւ ծանօթ չէ հայ

լեզուին . սպրդած են իր գրչէն ասորական ձեւեր . քերականական անկանոնութիւններ: Օտարին ձեռքը կը մատնանչէ «Յովսէփ եպիսկոպոս Այրարատայ» (էջ 56 . հմմտ . § 39): Ան միարնեայ է, իր աչքին Մարկիանոս կայսր «անարի» է, իսկ Անատոլիոս եւ Փլորենտոս (Եփլալիոս) «արք վատթարք եւ անարգք, միանգամայն անասուածք» (էջ 56 . հմմտ . § 51):

Հայոց դաշնագրութիւնը Կայսեր հետ խարդախած է, այնպէս ներկայացնելով, թէ կայսրը մերժած է օգնել, նոյն իսկ Փլորենտիոսը պատգամաւոր զրկած է Պարսից, իրենց խաղաղութեան դաշինքը աւելի ամրացնելու համար (§ 51):

Մամիկոնեան տոհմանունը երկու անգամ միայն յիշուած է եւ այն Վարդանի անուան կից (32, 93) եւ անգամ մ'ալ «Վասակի» համար ըսուած «յայն Մամիկոնէից, որ կան ի ծառայութեան Յունաց» (72), որ «Վասակ» Սիւնիի գործակիցն էր եղած:


Ան իրեն առաջնորդ ունի այս խմբագրութեան համար Ղ . Փարպեցու Բ . Գրուազը, ուսկից Կ'օրինակէ իշխանացանկեր եւ մանր դիպուածներ: Աչքի առաջ ունի նաեւ Եղիշէի Վարդանանց վկայարանութիւնը, ուսկից առած է հատուածներ, իսկ Ս . Քահանայից վկայարանութիւնը ամբողջութեամբ կցած է Պատմութեանս իրրեւ «Ը . յեղանակ»:

Խմբագրութիւնս պէտք է կատարուած ըլլայ Ը . դարու երկրորդ կէսին:

2. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՒ ՍՈՒՐԻՐ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ ԶԱՐԶԱՐԱՆԱՑ ԵՒ ԿԱՏԱՐՄԱՆ:

Եղիշէի խմբագրուած Պատմութեան վերջը կը գտնենք յաւելուած մը որ խորագիր կը կրէ . «Արտաքոյ եօթն յեղանակին (կարգա՛ յեղանակաց) Ութերորդ: Դարձեալ վասն նորին պատերազմին եւ շարժարանաց սուրբ Քահանայիցն»: Այսպիսի խորագիր մը ծանօթ է Ստեփանոս Ասողիկի, որ գիտէ թէ գրած է «Եղիշէ վարդապետ որ վասն Վարդանանց եւ սուրբ Քահանայիցն շարժարանաց եւ կատարման» (էջ 7): Նման կը հնչէ նաեւ Թոմաս Արծրունոյ յիշատակութիւնը . «... որպէս եւ ցուցանէ զեզ Պատմութիւնը սրբոց Վարդանանց, զորս գրեաց երանելի քահանայն Եղիշէ» (էջ 27):

Խորագիրս կ'ենթադրէ այս յեղանակին մէջ «դարձեալ վասն նորին (Հայոց) պատե-



րազմին» . բայց այժմ գոյութիւն չունի այն պատերազմի պատմութիւնը յեղանակիս սկիզբը, որ կը սկսի .

«Արդ ի ԶԺ . ամի տէրութեան նորին (իմացի՛ր՝ Յագիերտի Բ. 439—457) թաղաւորի, դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն Գուշանաց . . . » : Եւ կ'աւարտի այսպէս . «Եւ մեք եւ նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց . . . » :

Առիթ եղաւ յիշելու, թէ Եղիշէ Պատմութեան մէջ Յագիերտ Բ.ի անունը յիշատակուած է անգամ մը էջ 7 եւ երկիցս էջ 153 : Այս տեղ, ուր նոր յեղանակ մը կը կցուի Պատմութեան, կը սպասուէր, որ հեղինակը նախարանով մը բացատրութիւն տար այս Յաւելուածին մասին, զնէր գայն նախորդ յեղանակին հետ կապակցութեան մէջ . մանաւանդ անոր համար, որ Պատմութեան նախարանին կամ Ընծայականին մէջ այս Ը . յեղանակի նկատմամբ որ եւ է խօսք չէր ըրած :

Գրուածքիս սկզբնաւորութիւնը ցոյց կուտայ որ այն ուրոյն գրութեան մը շարունակութիւնն է . այսինքն «նորին (Հայոց կամ Վարդանանց) պատերազմին» Պատմութեան : Այդ է 451 տարւոյն Կարմիր Վարդան Մամիկոնեանի մղած պատերազմն, որ տեղի ունեցած էր Աւարայրի դաշտին վրայ, ինչպէս կը պատմէ Ղազար Փարպեցի : Այս պատերազմի պատմութիւնը պէտք է գրած ըլլայ նաեւ Եղիշէ, իր ինքնայատուկ ոճով . եւ այդ Պատմութեան վերջին գրուագն է, զոր կը ներկայացնէ յեղանակս :

Ա. մասի պակասը ինքնին իմանալի է : Եղիշէի իմբազիրը «Վարդանանց պատերազմի պատմութիւնը» անձամբ խմբագրած էր նախորդ Ա. — Է . յեղանակներուն մէջ . երկու Վարդանանց պատմութիւնները մէկի վերածելով օգնութեամբ Ղ . Փարպեցու պատմութեան : Այդ առաջին եւ երկրորդ Վարդանանք են 450/51 եւ 570/78 տարիներուն կրօնի ազատութեան համար մղուած պատերազմները : Երկրորդը նսեմացուցած է, առաջինը անոր տարրերով պայծառացուցած :

Տեղիքս, ուր կ'ըսուի . «Նովաւ եւ դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրեալքեր ամպոց, այլ ի սուրբ եւ յարեւարուի վկայից ցանեալ եւ ցրուեալ սպիտակութիւնք սուրբ ոսկերացն» (147) յայտնապէս կը վկայէ, թէ Յեղանակիս երգիչը կանխաւ երգած էր նաեւ Աւարայրի կռիւը :

Եղիշէի իմբազիրը որ Խաղամախեաց դաշտի պատերազմը Արտազ փոխադրած էր, եւ ոչ իսկ Աւարայր գիւղը յիշած էր յանուանէ :

Իմ ուսումնասիրութեանս մէջ խմբագրի յաւելուածներ անուանած եմ այն հատուածները, որոնք Երկրորդ Վարդանանց Պատմութեան չէին պատշաճեր : Այդպիսի յաւելուածներ պէտք է նկատել Եղիշէի Պատմութեան 26, տ. 12—27, տ. 12, 28, տ. 25—29, տ. 28, 38, տ. 6—43, տ. 28, 78—81 (խառն), 81, տ. 39—88, 103—109, չհաշուելով այլ մանուկը, որոնք փոխառութիւններ են մասամբ Ա. եւ մասամբ Բ. մասէն . այսինքն Կարմիր Վարդանի պատերազմին նախորեակին եւ պատերազմի դաշտին վրայ խօսուած ճառերուն եւ Վասակի դատաւարութեան եւ դատապարտութեան հայոյ հատուածներ :

Դժբախտաբար Ա. մասը իր ամբողջութեան մէջ տակաւին չէ յայտնուած որ եւ է ձեռագրի մէջ . բայց կարելի է ամբողջ նկատել Բ. մասը, ներս առնելով անկէ փոխառութիւնները խմբագրուած Եղիշէի մէջ :

Եղիշէ աչքի առաջ ունեցած է Ղազար Փարպեցու Պատմութիւնը, որուն կը հետեւի : Բ. մասին մէջ զարգացուցած է ճարտարօրէն Փարպեցու հաղորդած տեղեկութիւնները նոր պատկերներով, հարցաքննութիւններով, եւ ջատագովական պատասխաններով, իրեն նմանութեան օրինակ առած չին Վկայարանութիւնները : Թէպէտ Փարպեցին է իրեն աղբիւրը, բայց թոյլ տուած է իրեն անգամ մ'ըսելու, թէ Ս . Քահանայից նահատակութեան մասին Խոսիկը «երկրորդեաց Մեզ գամենայն կարգաւ եւ զիւրաքանչիւր անձանց սրբոցն զպատասխանիսն» (142) : Եթէ այս «մեզ» չհամարինք պարզապէս ճարտասանական արտայայտութիւն, պիտի ստիպուինք հաւատարմութիւն Ս . Քահանայք ի բերան ուսած էին Փիլոնէն տեղիքներ, իրենց պատասխանատուութեան ժամանակ բառ առ բառ յառաջ բերելու համար անկէ տեղիքներ (էջ 134 եւն) :

Իր ստեղծագործութիւնն է Մոզպետի գարձը (էջ 112—128) . որուն կ'անդրադանայ սպա Եղիշէ իր Պատմութեան մէջ (23, տե՛ս § 40, 6 եւ § 41) : Այս տեղ, էջ 26, աչքի կը զարնէ նմանութիւն մ'ալ Սահակ եպիսկոպոսի պատասխանատուութեան հետ (տե՛ս § 40, 1) : Այս առթիւ գրած էի տո-

ղերս . «Այս Վկայարանութեան հեղինակն է Եղիշէ, որ գրած է զայն իբրեւ ինքնակաց գործ մը 575էն ետքը» (Մասն Բ. , էջ 630) : Այնու որ Եղիշէ Մոզպետի նահատակութիւնը դիտէ, պիտի հետեւցնենք թէ ան նախ Ա. Վարդանանց Պատմութիւնը գրած է եւ ապա Բ. Վարդանանց . ուստի «575էն ետքը» պէտք է իմանալ է . դարու երկրորդ քառորդը : Եղիշէի ստեղծագործութիւնն է նաեւ Բէլ հոնի դերը (էջ 110—111), որ կը բանայ Ս . Քահանայից նահատակութեան առաջին արարուածը :

Ս . Քահանայից նահատակութիւնն եւ Խորէնի եւ Արբահամի խոստովանութիւնն պատմելէ ետքը (էջ 142—149) կ'անցնի հեղինակը կալանաւոր Նախարաներու խոստովանողական ընթացքն եւ աղատութիւնը նկարագրել (էջ 150—155) : Ծարունակութեան մէջ կը խօսի «Երանելի առաքինեաց եւ կապելոց եւ անկելոց» տիկիներու մասին եւ կը դրուատէ անոնց համբերութիւնն եւ ժուժկալութիւնը (էջ 155—158 . հմմտ . Փարպ . 109—110) :

Ուշագրաւ է այստեղ ընդարձակ հատուած մը, որ կը պատմէ Աղուանից (Վաչէ) արքային ապստամբութեան մասին (էջ 153, տ. 20—155, տ. 6) որ տեւեց 457—460 : Թագաւորին անունը լուծած է : Ամբողջ այս հատուածը գրեթէ բառ առ բառ կը գտնենք Մովսէս Դասխուրանցու («Կաղանկատուացւոյ») քով (Ա. 10, էջ 12—14) հանդերձ թագաւորին անունով : Այս հատուածին կցուած է Եղիշէի կողմէ գիտողութիւնս . «Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի» (155) : Ինձ կը թուի, թէ Եղիշէ իր խոստովանութիւնը կը ինքնուրոյն գրուածքի մը մէջ : Այդ գրութիւնն կը ներկայացնեն այն երկու յանուն Գիւտ կաթողիկոսի թուղթերը, որոնք գրուած են Աղուանից Վաչէ թագաւորին, յառաջ բերուած Մովսէս Դասխուրանցիէն (Ա. 11, էջ 14—22) այսպիսի վերնագիրներով .

(Ա.) Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ լի երկնաւոր շնորհօք : — Ի ճառս սուրբ սիրոյ քո առաքինութեան ի կամաց անձին իմոյ բղխեցին միտք իմ . . . (էջ 14—21 . տպ . էմին) :

Բ. Թուղթ Գիւտայ առ նոյն արքայ : — Վկայ Գրիտոսի, չարչարակից խաչին . . . , էջ 21—22 :

Ոճն եւ լեզուն Եղիշէինն են, կան նոյնանման արտայայտութիւններ¹ :

Հ . Ն . ԱԿԻՆՅԱՆ

ԵՓՐԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԹԻՒՆԻ ՊՈՄՓԷՈՍԻ ԺԵՐՄԱՆԱԳԻՆ ՄԻՆՉԵՒ ԵՐԵՐԵՅԻՈՑ ԸՅԹԱՐՀԵՎԵԼՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն) :

Բ . Գ . դարէն ետքը . — Ճիշդ խօսելով Դիոկղետիանոս ուղած է կասեցնել այս շարժումը, եւ որոշ չափով մը յաջողած է¹⁰¹ : Կարգի եւ կարգապահութեան մարդ ըլլալով՝ կը սիրէր իւրաքանչիւրն իւր աստիճանին եւ ամէն բան իւր տեղը պահել : Պետութեան միութիւնը վերահաստատելէն ետքը, որոշեց անկարելի ընել ապագային համար հեռաւոր գաւառներու անջատականութիւնը, որուն նպատակը էր զօրագուններու քայքայման դրութիւնը պատերազմի մ'աւարտելէն ետքը : Իւր ջանքերն ուղղուելու էին զլիաւորաբար Գաղղիոյ եւ Արեւելքի վրայ : Մեր աղբիւրները մանրապատում չեն ընծայեցնեն իւր գործը . միայն դիտենք որ զօրագունները թիւը քառապատկէն աւելի աճեցուցած է եւ մանաւանդ խնամ տարած սահմանազլիսոյ ամբոցներուն ու պահակազօրաց¹⁰² : Լեզէոններն արդէն նուազաքանակ զինուորաց թիւ մ'ունէին . զասի փոխարինելու համար՝ բազմացուց լեզէոններու թիւը, եւ նորակազմ լեզէոնները միայն 1000 հոգւոյ զինուորաց թիւ մ'ունէին : Անտարա-

¹ Վերագոյն § 51, ծան . 10 ուշադիր ըրած էի թէ Եղիշէ «մինչեւ ի կողմանս Գաղերովի» տեղիքը (էջ 55) փոխ առած է Հիսպոգիտոսի ժամանակադրութեանն : Նոյնը կրկնուած է Ա . թղթին մէջ . «Ե՛հասուր առաքինութեան քո յարեւելից միջին ի Գաղերովի (տպ . Դաղարովի) , ի հարաւոյ մինչեւ ի հիւսիս» (էջ 20) :

¹⁰¹ Հմմտ . Մոմմսէն, անդ, էջ 240 եւն .
¹⁰² Լակտանտիոս, Յաղագս մահու հալածչաց, 7 . Սուիգաս՝ թօչաւի . : 6 Διοκλητιανός λόγον ποιούμενος ἰδὼν πρῶτα μόνον ὄψθη καὶ δυνάμεσιν ἀποκόσσαις ἐκείσιν ἐσχατὰ δὲ χροῶσθαι καὶ φροῦδία ποιῆσαι (Դիոկղետիանոս խօսելով զործոց մասին կը կարծէր թէ պէտք է բաւականաչափ զօրութեամբք իւրաքանչիւր սահմանազլուսի ամբոցները եւ կարծէր թէ պէտք է զեկուսիւնը ջանալով անուան ըլլալու է, որովհետեւ լիովին կը համաձայնի անոր հետ՝ զոր վերջինս կասանդիանոսի մասին կ'ըսէ հակառակ իմաստով (Բ, 34) :